



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ. ՏԱՅԻ - ՅՈՒՆՈՒՍԻ 1937 13^{me} Année - Janvier 1937

Խմբագրական

ԵԼԻՐ. ՈԳ ՏԷՐ

Յ. Ն. Ղ.

Հոգ. գեաներ

Հոգ ին ներք մնացած

Աստուծոյ իտային գերազանցութիւնը

Զ. Բ. Պաւստրեան

Շնորհաց ծովին

Գառնուկին ետեւէն

Սամուէլ Երեմեան

Երջանիկ յոյս

Երջանիկ յոյսը եւ Աստուծոյ գումարը

Վեր. Պ. Ս. Ազիւլեան

Տէրը չաշացնէր Բր խոստմունքը

Սամուէլ Պ.

Կենաց ամուսնիկ

Կորուած ոչխարը

Կերտողութիւն

«Տէրսը բու Աստուծոյդ տնուրը»

Պատմութեաց

Եւ ալ Տէր Յիսուսի համար կը վկայեմ

Լուսեր Բարսէլեան

Մանկական տարիներ
Մանկական տարիներ

Յիսուսի հետ միասին

Զանազան լուսեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, ալսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաք կըզգան Աստուծոյ խօսքին անխորդակ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկա միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարմուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին ֆարգամանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա.
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ման: : յ:վ գրահան ամսագրութի առթիւ հաճեցէք մանտային վրոյ չմուծուլ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը ընամաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Երիւ. Ե 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Գանգիսար մանկու խոտամոնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ տա-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1957

ԹԻԻ 1



ԵԼԻՐ, ՈՎ, ՏԷՐ

(Նոր տարուան խորհրդածուծ իւն)

ԵԼԻՐ, ՈՎ, ՏԷՐ, ու Քու թշնամիներդ թող ցը-
ւին, եւ Քեզ ատողները առջեւէդ փախչին...

Թուոյ Ժ. 35

Գոհութիւն Տէրոջը անցեալ տարիին համար,
զոր բոլորեցինք ապահով եւ 1937ը զմեզ իր պայ-
ծառ արշալուսովը ողողեց:

«Բանբեր»ի խմբագրութիւնը առաջին առթիւ
իսկ սրտագին մաղթանքներ կը զրկէ իր մեծ ըն-
տանիքին իւրաքանչիւր անդամին՝ ձեռքի ուժ-
գին սեղմումով մը շնորհաւորելով նոր տարին եւ
մաղթելով ամէն բարի բաներ երկնաւոր լուսոյ
Հօրմէն: Այս նոր տարուան հետ Անիկա տայ Ձեզ-
մէ ամէն մէկուն նոր ուրախութիւն, նոր յաջո-
ղութիւն, նոր տեսիլքներ Ձեր այս տարուան օ-
րական կեանքին մէջ, եւ Ձեր ալ զործերը — թէ
նիւթական եւ թէ հոգեւոր — Անկէ, Անով եւ Ա-
նոր փառքին համար ըլլան:

Ի՞նչ շուտ անցաւ 1936ը: Այնքա՛ն շուտ, երէկ-
ուան օրուան պէս ու կը վերաբերի անցեալին
այլեւս: Նոր տարի մը ահա: Մեր նամակները
հերկայ տարուան թուականով պիտի թուագր-
ուին: Մենք ինքզինքնիս 1937ին ա՛լ ներկայի
մէջ կ'զգանք: Սակայն այս ներկային մէջ նոյն
իսկ կը գտնենք ինքզինքնիս անձանօթ բաւիղի
մը մէջ, դուռը մեր ետեւէն գոցուած, եւ առջը բո-
լորովին մուրձ: Ու մենք բնականաբար կը տա-
տամսինք յառաջանալէ, բայց յակամայ՝ կը
քշուինք շտապող ժամանակին խարազանէն հար-
ուածուած, ուստի պէտք է քալենք, պէտք է
խարխափելով յառաջանանք, քանզի ժամանակը
մեզի չսպասեր:

Այսպիսի պարագայի մը բնականաբար մար-

դիկ անտարբեր չեն կենար: Միտքը կը զործէ՝
հարցեր կ'արթննան մեր սրտերուն մէջ, կ'ուզենք
զիտնալ թէ այս տարի ինչե՛ր պիտի ըլլան, ի՞նչ
հաւանականութիւններ եւ անակնկալներ պիտի
պարզուին մեր առջեւ: Անձուկ հետաքրքրու-
թեամբ մեր աչքերուն ծայրէն, քոփտի կը դի-
տենք ապագայի մթութենէն զէթ նշոյլ մը կոր-
զելու գաղտագողի, այդ ալ շահ մը սեպելով մե-
զի: Այսպէս, աշխարհի մարդիկ, որոնք մթու-
թեան եւ խաւարի մէջ կը տարուբերին, վհուկ-
ներու, աստղագէտներու եւ բաղդահմայներու կը
հարցնեն իրենց ապագայի մասին, որոնք ընդ-
հանրապէս մեծադորդ յայտարարութիւններ
կ'ընեն եւ նոյնիսկ թերթերու միջոցաւ կ'ալեկո-
ծեն մարդկային անկայուն սրտերը վախի կամ
ուրախութեան փուռ զգացումներով: Մենք պէտք
չունինք հարցնելու ատոնց, որոնց գործերը ա-
նիծեալ զործեր են եւ որոնց վախճանը յաւիտե-
նական կորուստ է, ինչպէս նաեւ անոնց հետե-
ւողներունը: Մենք ունինք Աստուծոյ խօսքը, որ
լուսաւոր շահի մը նման լոյս կուտայ մեր մութ
ճամբուն: Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է ու իմ
շաւիղներուս լոյս: Տէրոջը յանձնէ քու ճամբագ
ու Անոր յուսա եւ Անիկա պիտի կատարէ: Ի՞նչ
պիտի պատահի, ի՞նչ պիտի ըլլայ, այս բոլոր
հարցերը իրենց պատասխանը այդ համարէն
կ'առնեն: Ուրեմն «Բանբերի օրացոյց»ին Յուն-
ուարի առաջին օրուան ոսկեղէն համարը թող
մեզի կարգ մը խորհրդածութեանց առաջնորդէ:
«ԵԼԻՐ, ՈՎ, ՏԷՐ, ու Քու թշնամիներդ թող ցըւին,
եւ Քեզ ատողները առջեւէդ փախչին»:

Մովսէս կ'ըսէր այս խօսքը եւ մասնաւորա-

պէս երբ Իսրայէլ չուեղու ըլլար տեղէ մը ուրիշ տեղ: Կ'երեւակայեմ պարագաները: Ժողովուրդը հանդարտ կը քնանար դեռ եւ հազիւ հոս ու հոն պզտիկ շարժումներ կը նշմարուէին ընդհանուր բանակատեղիին շուրջ մթնշաղը լուսաւորող լոյսին տակ: Եւ ահա այդ կանուխ ժամուն, Մովսէս որ արդէն աւելի կանուխ ելած իր պաշտամունքը կը մատուցանէր, կը տեսնէր որ տապանակին վերեւ կեցող Աստուծոյ ներկայութեան հրեղէն սիւնը կը բարձրանար: Մովսէս նկատելով թէ ասիկա ազգարարութիւն մըն էր Տէրը մէջն ճամբայ ելլելու, անմիջապէս հրաման կուտար ժողովուրդին պատրաստուելու ճամբորդութեան: Իրաւ հանգիստի խոտով մըն էր ժողովուրդին համար, մանաւանդ ընտանիք եւ զաւակ ունեցողներուն, բայց անոնց ծանօթ էր թէ այդ իջեւանը առ ժամանակեայ էր եւ թէ ուրիշ աւելի գեղեցիկ հանգիստ մը իրենց կ'սպասէր խոստացեալ երկրին մէջ: Այս պատճառաւ անոնք սիրով կը պատրաստուէին: Մարդիկ՝ իրենց գոտիները ուժով մը կը կապէին, մարեր իրենց զաւակները կը խրախուսէին անոնց աչքերը շփելով ու հագցնելով զանոնք, վրանները կը հաւաքուէին՝ կը փաթթուէին ու կը դրուէին կենդանիներուն վերայ: Եւ այսպէս ամէն ինչ պատրաստ էր չուելու Քանանու ընդ առաջ, այն տեսլականով թէ մօտ էր հանգստեան օրը: Եւ ահա Մովսէս Իսրայէլի առաջնորդն ու անոր ներկայացուցիչը իր յաղթ հասակովը բանակին առջեւն անցած Աստուծոյ տապանին ի դիմաց, վեր բարձրացած լոյսին առջեւ, ձեռնադրած կ'աղօթէր, «Ելի՛ր, ով Տէր, ու Քու թշնամիներդ թող ցրուին ու Քեզ ասողները առջեւէդ փախչին» ու քայլը կը նետէր դէպի առաջ, քահանաները Տէրը տապանակը ուներնուն առած՝ իրենք ալ կը յառաջանային ու բանակը կը շարժէր:

Ո՛չ Մովսէս, ո՛չ Իսրայէլ անգիտակ էին իրենց առջեւը գտնուած անապատային դժուարութեանց եւ նաեւ բազմապիսի վտանգներուն ու բազմաչարչար ճամբորդութեան: Սակայն անոնք բոլորովին ապահով կ'զգային ինքզինքնին գիշերուան հրեղէն սիւնին եւ ցորեկուան ամպի սիւնին տակ, Անոնք ալ շատ հարցեր ունէին իրենց մտքին մէջ Ամադէկի եւայլն ցեղերու մասին, Նոյնիսկ յանկարծական թշնամի յարձակումներու վտանգին առջեւ ալ անձկութեան պէտք չուէին: Ամպի սիւնը — Տէրը — իրենց առջեւն կ'երթար ցրուելու իր թշնամիները, վասնզի Իսրայէլի թշնամիները Իրենն ալ էին: Տէրը ամէն բանի պատասխանատուութիւնը ստանձնած էր եւ ա-

նոնց համար արդէն պիտի հոգար: Ի՛նչ փոյթ ուրեմն հոգ ընելու, յիմարութիւն չէ՞ր այդ:

Մենք եւս Տէրը շնորհքով Ձեզի հետ եւ բոլորիս համար զայս կ'ընտրենք որպէս 1937ի տարեկան նշանաբան, քանզի մեր ներկայ պարագաները երբեք Մովսէսի ժամանակին պարագաներէն տարբեր չեն: Օրը ինչ պիտի ծնանի, մէկը չգիտեր. ազգերը Ղուկ. ԻԱ. 25ի համաձայն կը տազնապին. ծովը եւ ալիքները զոռալ արդէն սկըսած են շատոնց եւ մեզի կ'սպառնան: Քաղաքական աշխարհը ծանր թնճուկի մը մէջ կը գտնուի, ազգեր իրարու վրայ կը յարձակին եւ երկիր կը զրաւեն ու իրենց կ'ենթարկեն առանց պատերազմ հռչակելու: Եղբայրասպան պայքար մը հուր ու մահ կը փչէ մեզի մօտակայ երկրի մը մէջ, որուն կայծերը ո՛վ գիտէ մինչեւ ո՛ր կրնան նետուիլ յառաջիկայ ամիսներուն, նոյնիսկ օրերուն մէջ, համայն աշխարհը եւ քաղաքակրթութիւնը հրկիզելու: Ազգերու մէջ քաղաքական վարդապետութիւնները աւելի սուր եւ անհաշտ հանգամանք ստացած են եւ ազգեր կը զինուին ու կը զինուին ամէն կերպ մարդասպան միջոցներով, ոչ միայն ինքզինքնին պաշտպանելու համար, հապա փճանալէ առաջ, աւելի շուտ դիմացինը փճացնելու նպատակաւ: Այո, մարդոց սիրտերը կը նուաղի իրենց վախէն ու աշխարհի վերայ գալու բաներուն սպառնէն, վասնզի ապագան անարկու է: Մատթ. ԻԴ. 1 մէջ Տէրը իր աշակերտաց հարցին թէ ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, ի պատասխան, անոնց ընկիւք անոնց առջեւ կը դնէ: Զգոյշ լինէք, արթուն կեցէք, ով որ մինչեւ վերջը համբերէ, անիկա պիտի ապրի: Այս խորհուրդը խրախուսիչ է մեզի ալ:

Ուրեմն ամէն կերպով յարմար է այս նշանաբանը մեզի համար: Զայն ի մտի ունենանք, համբերութեամբ եւ զգուշութեամբ, արթուն մնալով Մովսէսի պէս, մենք եւս տեսնենք հրեղէն սիւնը որ կը բարձրանայ մեր առջեւն մեզի ճամբայ տալու 1937ի կամարէն անցնելու եւ Անոր խորանին առջեւ կայնած, ազատ ամէն տեսակ կաշկանդող մարդկային խորհուրդներէ եւ վախերէ, Անոր յաղթութեան վրայ բոլորովին վստահ (վասնզի մեզի համար միայն բարի պիտի ըլլայ ինչ որ ըլլայ) ուրախութեամբ եւ խրախուսուած աղաղակենք, «Ելի՛ր, ով Տէր, ու Քու թշնամիներդ թող ցրուին ու Քեզ ասողները առջեւէդ փախչին», ու մտնենք 1937ի բացուած դռնէն ներս:

Տէրը ձեզի ու մեզի հետ ըլլայ:

Յ. Ն. Ղ.



ՀՈԳԻՆ ՆԵՂԸ ՄՆԱՑԱՍ

(ՓԻԼ. Ա. 21-26)

«Վասնզի «խնժի համար ապրիլը Քրիստոս է»։ Մարգու մը կեանքի մասին ունեցած գաղափարը իմացիր ու անմիջապէս պիտի հասկնաս անոր գործի ասպարէզը։ Մարգու մը կեանքին տիրող իտէալը՝ անոր կեանքի մասին ունեցած գաղափարն է։ Ուրիշ ամէն ինչ երկրորդական և ստորակարգ է։ Ումանց համար կեանքը «դրամ» կը նշանակէ։ Այս կարգի մարդոց բոլոր շահագրգռութիւններն ու գործունէութիւնները դրամի կեր դարձած են։ Դրամը անոնց համար ամէն բան է։ Ումանց համար կեանքը «հիւմբալ» է։ Ասոնք առանց ժողովրդականութեան կեանքը դիակ մը կը նկատեն եւ համբաւի կորուստը մահուան սկզբնաւորութիւնը։ Ուրիշներու համար կեանքը «հիւմոյք» է եւ կը չափուի զգայարանքներուն ընդունած տպաւորութիւններով։ Ասոնց համար բարձրագոյն կեանքին նշանակներն են գեղեցիկ աեսարաններ, քաղցրահնչիւն ձայներ, անուշ հոտեր, համեղ համեմներ, գգիւթի զգացումներ։ Երբ ասոնցմէ կը զրկուին, այլեւս կեանք կոչուելու արժանի չեն սեպեր։ Սակայն մեծ Առաքեալը հոս ցնծութեամբ կը յայտարարէ թէ իրեն համար «կեանքը հիւմանիշ է Քրիստոսի»։ Ձէր կարող Քրիստոսէ դուրս կեանք մը երեւակայել։ Քրիստոսի չգտնուած տեղը միայն մահ կը տեսնէր եւ ուր որ Քրիստոս էր՝ կեանք։ Երեւութապէս աննշան առարկայ մը անմահ կրակով կը հրավառուի երբ Անհունին հետ հաղորդակցութեան կը մտնէ։ Հասարակ քաղաքավարութիւն մը յաւիտենական լուսով կը փայլի, երբ Տէրոջը շնորհքը կը տիրէ անոր վրայ։ Ճշմարտապէս ապրիլը եւ ապրելու փառաւոր գիտակցութիւնը կը կայանայ ամէն ինչ «Քրիստոսի հետ զգալուն», ամէն ինչ «Քրիստոսով սկսելուն», ամէն ինչ «Քրիստոսով վերջացնելուն» մէջ։ Առաքեալը որ կողմ որ դառնար՝ Քրիստոսը կը փնտռէ։ Քրիստոսի որոշել կուտար իր նպատակները ու կ'ականակէր որ Քրիստոս իր կնիքը զարնէր այն նպատակներուն հասնելու համար գործածուած միջոցներուն վրայ։

«Ու մենիլը օգոստ» Ասիկա Առաքեալին նախկին յայտարարութեան պտղատու արդիւնքն է։ Եթէ «ապրիլը Քրիստոս է», ամէն ինչ որ աւելի մեծ չափով կը յայտնէ զԱյն ինժի, զիս աւելի կը կենդանացնէ։ Ուրեմն մահն իսկ բարեկամներէս մին հաշուելու է։ Ձէ՞ որ անիկա կը վերցնէ քօղը, մէկդի կ'ընէ արգելիչ մէզը ու մեզ կը փոխադրէ Յարութիւնն ու կեանքը եղող մեր Տէրոջը ներկայութեան ջինջ ու անուշ միջօրէին։ Երանելի, եռապատիկ երանելի է այն անհատը, որ իր պարագաներուն հաշուեկշիռը պատրաստած միջոցին, կարող է վստահօրաբար մահը իր շահերուն դասէն սեպել։ Այն մարդը, որուն համար կեանքը «դրամ», «հիւմբալ», «հիւմոյք» եւ «հանգիստ» կը նշանակէ, ստիպուած է մահը իր փնտսի հաշուի սիւնակը անցնել, քանզի անոր համար մահը միմիայն աւերիչ ու աղմկալի թշնամի մը, «վերջին թշնամին» է, որ իրեն ամենագեղեցիկ ծրագիրները վերջնական եղկելի խառնաշփոթութեան կը մատնէ։ Պօղոս Առաքեալին համար մահը չէր ներկայացներ խոնաւ ու նեխած վայր մը, ուր ամէն գանձ ընդդիոյթ կ'ապականի, այլ շնորհալի փոխադրման մը միջոցը, ծածուկ ճամբայ՝ որ դէպի լոյս կ'առաջնորդէ։

«Ապա եթէ մարմինի մէջ ապրիլս իմ գործիս պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր որը ընտրեմ»։ Երբ ամէն ինչ Քրիստոս է մեզի համար ու առանց Անոր կեանքը ոեւէ նշանակութիւն և անուշութիւն չունի, որչափ դժուար պիտի ըլլար եթէ ընտրութիւնը մեզի ձգուէր։ Ի՞նչ ընենք, մեր վրանները վերցնելով երկնային տունը փոխադրուինք, թէ քիչ մը աւելի պահենք մեր «վրանի նման երկրաւոր տունը», շարունակելով մեր պանդխտութիւնը։ Երկրի վրայ Տէրոջը հետ անցուած կեանքը ծառայութեան համար օգտակար է, մինչ յաւիտենականութեան մէջ ապրելով, ապանատես կ'ըլլանք նորանոր հրաշալիքներու եւ պտղաւից հանգիստ կը վայելենք։


«Երկու կողմանէ ալ նեղը մնացած եմ, մեկնելու եւ Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով, քանզի այն շատ աւելի աղէկ է։ Բայց մարմինի մէջ կենալը ձեզի համար աւելի հարկաւոր։ Իրապէս այս է ամենէն զգալի քրիստոնէին վիճակը։ Անոնք կրկնակի մղում մը կ'ըզգան։ Ուժգնօրէն կը մղուին քօղին վերցնելուն եւ իրենց Առաջնորդը դէմ առ դէմ տեսնելու քաղաքէն ու նմանապէս կը մղուին ներկայ պէտքէն՝ երբ կը տեսնեն իրենց Տէրոջ հոգեկան

տապանապաշտ մարդոց կարօտութեանց համար: Կը լսեն Տէրոջը ձայնը որ կը կանչէ Հանգստեան երկրէն, կը լսեն նաեւ զՍ.յն որ կը կանչէ ծառայութեան դաշտերէն: Սակայն այս երկու կողմերը մտենեւին հակասական չեն իրարու եւ Տէրոջը ծառային սիրտը երկուքի չեն բաժնէր, այլ ընդհակառակը՝ զիրար կը լրացնեն, զիրար կը սնուցանեն ու կը զօրացնեն: Հանգստեան երկրէն եկող հեռաւոր կոչը նոր հոանդ ու քաջութիւն կը ներշնչէ առաքեալին, աւելի մեծ աշխոյժով ու աշխատանքով գործելու: Աւելի կը վստահացնէ զայն թէ Տէրը կանչած է զինք ու իր ջանքերը Տէրոջմէ հաստատուած են:

«Եւ այս բանին համոզուած ըլլալով, զիտեմ որ ձեր ամենուն հետ պիտի կենամ ու մնամ, որպէսզի զուգ զարգանաք եւ ուրախ ըլլաք հաւատքով»: Տէրը մեր պարտականութիւնը մեզի պիտի յայտնէ ու մեր ոտքերը իր ընտրած ճամբուն վրայ պիտի պահէ: Եթէ ապրիլը Քրիստոս է, Անիկա որոշապէս պիտի ցուցնէ թէ ինք ուր կ'ուզէ որ մենք գտնուինք: Մասնաւոր պէտք մը պիտի կանչէ մեզ այնպիսի ձայնով մը զոր կարելի չէ տարբեր մեկնել ու մենք վստահ պիտի ըլլանք թէ ճիշդ այդ տեղը պատրաստուած է մեր ծառայութեան համար: Պօղոս կը վայելէր այս խաղաղ վստահութիւնը: Թէեւ երկնային Հայրենիքին նուազը կը հասնէր անոր ուշադիր ականջներուն, սակայն այն յանկուցիչ մեղեդին չէր անդամալուծէր զայն, այլ ընդհակառակը կ'ոգեւորէր անոր ձեռքերը անմիջական գործերը կատարելու: Եւ ի՞նչ օրհնեալ գործ էր մնալ, որպէսզի մարդիկ զարգանային եւ ուրախ ըլլային հաւատքով: Որպէսզի քրիստոնէական դասընթացքին բարձրագոյն կարգերը փոխադրուէին» ուր տաղտկալի հնազանդութիւնը արդիւնաւոր ազատութեան, պարտականութեան զգացումը առատ ուրախութեան՝ եւ փոքրիկ զաղափարական մը անպատմելի փառքի տեսիլներու կը վերածուի: Անշուշտ այս փոփոխութիւնները արժանի են որ առաքեալը սպասէ: Արժանի են որ մենք ալ քիչ մը ուշ հասնինք մեր երկնային հայրենիքը: Մէկի մը քանի մը քայլ յառաջ երթալուն օգնել երկնային ճամբորդութեան վրայ, քիչ մը աւելի երկնային կոթով ներմուծել անոր հոգւոյն մէջ, ուրախ թափ մը տալ անոր քայլերուն՝ ծառայութիւններ են որ գերազանցօրէն կ'արդարացնեն մեր վերջին ճամբորդութեան յետաձգումը եւ աւելի փառաւոր «Բարի գալուստ» մը կ'ապահովեն մեր Հօրը տունը: Ուստի մեծ ա-

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹԻՒՆԸ

(Նոր տարուան խորհրդածուծիւն)



Եթէ մարդ յաւիտենական կեանքի հասնիլ կ'ուզէ, պէտք է որ ճանչնայ զԱստուած: Առ այս, հարկ է որ Աստուած խօսի մարդուն իր միտքը եւ զիտութիւնը յայտնելու: Մարդն ալ իր կարգին պէտք է որ լսէ, իւրացնէ եւ կատարէ ինչ որ իր Տէրը կ'ըսէ:

Սկիզբէն, մարդուն խօսելուն համար, Աստուած կ'երեւէր անոր. այսպէս էր Ադամ Եւայի համար: Քիչ յետոյ ժամանակաւոր երեւոյթներով մօտեցաւ մարդուն, ինչպէս Աբրահամի, Մովսէսի, Յեսուի: Աւելի ուշ, ներշնչեալ խողովակով կը խօսէր տեսանողներուն եւ մարդարէներուն միջոցաւ: Վերջին օրերս ալ իր Որդիովը խօսեցաւ մեզի: Աստուծոյ այս բոլոր յայտնութիւնները խտացուած են Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ: Գիրքը իրաւ, շարադրուած է շուրջ 1500 տարիներու ընթացքին, սակայն ոսկեղէն թել մը — զոր մենք լիակատար ներշնչում կը կոչենք — Գրքին մէջ մի էջէն կ'անցնի ու իրար կը կապէ բոլորը, այնպէս որ հակառակ բազմաթիւ հեղինակներու գործակցութեան, Գիրքը էականապէս Ս. Հոգւոյն գործն է: Յայտնութեան գիրքը կը փակէ Աստուածաշունչը: Այլ ուրիշ բան պէտք չէ, սակայն ունեցածնիս ալ կը բաւէ, վասնզի Աստուած սուրբ էջերուն մէջ պահած է անհատնում զա՛մ մը, որ ցարդ բաւած է բոլոր դարերուն եւ որ զեռ այսօր ալ չէ սպառած: Փառք Աստուծոյ:

Իր խօսքը մեզի տալով, Աստուծոյ փափաքն է որ մարդ այս Խօսքին միջոցով իր ուղած տեղը հասնի: Հարկաւ կարելի չէ, Աստուծոյ մարդուն համար ունեցած նպատակներուն մասին մէկ անգամէն խօսիլ: Առնենք մէկ գաղափար: Տէրը կը փափաքի իր խօսքով մեզ փրկել ու այս կը նշանակէ ազատ ընել մեղքէ եւ դարձնել նման

.....

առաքեալը՝ երկնային նուազը ականջին՝ կը հետեւի իր սուրբ կոչումին՝ արտայայտելով իր սիրտը գրաւող փափաքը, «Որպէսզի ձեր պարձանքը իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս սո՞վ իմ նորէն ձեզի գալուստ պատճառով»:

Թարգ. Ն. Մ.

քրիստոսի: Շատ առումներով, այս է բոլոր մարդկութեան մեծագոյն կարօտութիւնը:

..

I Աստուծոյ խօսքին գերազանց հեղինակուածիւնը:

Նախ այս կէտը թող որոշ ըլլայ: Խօսքը մարդու խօսք է, այլ Աստուծոյ խօսք: Ոչ մէկ բան անոր հաւասար թող սեպուի կամ բաղդատուի: Այս խօսքը Աստուծոյ է ելած է եւ դարերու ընթացքին մարդոց տրուած է իր պատգամաբերներուն ձեռքով: Խօսքը յաւիտենական արժէք ունի, վասնզի կ'ըլլէ Անկէ ուր է, որ իր մէջ կը ծրարէ բոլոր յաւիտենականութիւնները եւ սրուն համար ժամանակ չկայ: Այս պատճառաւ ալ խօսքը ետ եւ առաջ կը նայի ծրարելով մարդուն բոլոր անցեալն ու ապագան: Այսպէս մեծամեծ գաղտնիքներ այս խօսքով կը լուծուին: Մարդուն պատմութեան եւ ապագայ երջանկութեան վերաբերեալ շատ բաներ բաւարար չափով բացատրուած են հոն: Կեանքի եւ յաւիտենականութեան մութ խորհուրդները, անով լոյս եւ գոյն կ'ստանան եւ ոչինչ կրնայ գերազանցել Աստուածաշունչին պայծառ լոյսը: Ուստի եւ խօսքը կը մնայ, մինչ դարեր կ'անցնին:

Անոր մէջ անկորնչելի տարր մը կայ որ բոլորովին անպարտելի է: Եթէ մարդիկ ուզեն կոխկոտել զայն, կ'իյնան, եթէ զան ուզարնուին, կը փշրուին, ու որքան կատաղի ըլլաւ յարձակումը, նոյնքան սաստիկ է խորտակումը: Եթէ փորձեն թաղել, կարծես յարութիւն կ'առնէ, եթէ կարծեն թէ սպաննեցին, կ'երեւի որ չ'ապականիր, այլ միշտ կը մնայ եւ կ'ապրի: Կ'ապրի եւ կ'ապրեցնէ կենսաբեր հոսանք մը բերելով մեղապարտ մարդկութեան մը: Ինչ որ ըսած է, եղած է ու կ'ըլլայ ամէն օր: Իր արժէքը անխարդախ կաթի պէս է, եւ զուտ ոսկիի պէս: Ճշմարտութիւն, սրբութիւն եւ լոյս կը կազմեն իր յատկանիշները: Ահա թէ ինչո՞ւ գերազանց է անոր հեղինակութիւնը:

Յամենայն դէպս, այս հեղինակութիւնը չկապկպեր մարդուն ազատութիւնը: Մարդ դեռ ազատ է ընդունելու կամ մերժելու Գրքին պատգամը: Իրա՞ւ Աստուծոյ փափաքն է որ «բոլոր մարդիկ փրկուին», որ «երկրի բոլոր ծայրերը» իրեն դառնան, տակաւին ամէն ոք իրեն համար որոշելու է «զալ, փնտռել, զարնել եւ դառնալ»: Այս պատճառաւ ալ մարդկութեան մէկ մասը չհնազանդիր խօսքին կամ զայն չընդունիր:

Բայց եթէ մարդը ազատ է ընտրելու, իր ա-

զատութիւնը չկրնար զինքը ազատ ընել իր ընտրութեան հետեւանքներէն: Մարդ ազատ է պատուհանէն դուրս ցատքելու, սակայն չկրնար արգիլել որ չջախջախուի իր մարմինը: Այսպէս ալ մարդ կրնայ մերժել Աստուծոյ հեղինակաւոր խօսքը, բայց իր ձեռքը չէ խոսափիլ եւ պրծիլ այն յաւիտենական հետեւանքներէն որուն կը դիմէ: Մէկը կրնայ մերժել զարնելու փրկութեան եւ կեանքի դուռը, սակայն չկրնար փակել կորստեան եւ մահուան անդունդները որոնք իրեն կ'ապասեն: 2^է որ մարդուն ապագան կամ Աստուծոյ հետ ըլլալ է, կամ հեռու Անոր երեսէն:

Ուրեմն հարկ է «հեղութեամբ ընդունիլ» Աստուծոյ խօսքը, մանաւանդ որ խօսքն ալ բոլորովին նպաստաւոր է մարդուն: Նպատակ ունի փրկել մեզ: Ուստի բաց սրտերով ընդունելու է: Եւ խօսքը իր զարմանալի ճկունութեան եւ լեցունութեան մէջ, ամենուն ալ բան մը ունի տալիք: Մանուկին կամ պարզամիտին անխարդախ կաթ է: Բոլորին համար հաց է, կարելի է ուտել յաճախ, միշտ, առանց ձանձրանալու կամ առժեշտ: Սուրբերուն անօթի հոգիներուն համար միսի եւ հաստատուն կերակուրի պէս է: Անոնց համար որոնք կանչուած են վկայելու՝ «Ճաշակեցէք ու տեսէք զի քաղցը է Տէր» խօսքը, մեղրէն անուշ է: Այսպէս հեզ սրտին՝ խօսքը միշտ օրհնութիւն կը բերէ: Ուստի բացուինք իր առջեւ: Ինչպէ՞ս սակայն:

Արդեօք ինչպէ՞ս մտիկ պիտի ընէինք մեռնելու վրայ եղող սիրելիի մը վերջին մրմունջը, կամ զինուոր մը ինչպէ՞ս կը լսէ իր հրամանատարին, աշակերտ մը ինչպէ՞ս կը լսէ իր գիտնական վարդապետին խօսքերը, կամ քաղաքացի մը ինչպէ՞ս պիտի ունկնդրէր իր թագաւորին պատգամին: Վերջապէս հիւանդ մը ի՞նչ անձկութեամբ եւ ուշով միտ պիտի դնէր իմաստուն բժիշկին բարերար յորդորներուն, այնպէս ու աւելի մեծ, խոր ու անվերապահ հետաքրքրութիւնով մը, հարկ է մեզի ընդունիլ Աստուծոյ խօսքը մեր սրտերուն մէջ:

Արդեօք այս կերպը կը համապատասխանէ՞ մեր փորձառութեան: Սորվա՞ծ ենք, յօժա՞ր ենք այսպէս լսելու Աստուծոյ խօսքը: Պաշտամունքներով կամ գրականութեամբ Աստուծոյ խօսքը առատօրէն վայելողներուն մեծ վտանգն է վարժուիլ Աստուծոյ խօսքին: Բարոզը ականջը կը շփացնէ եւ կ'անցնի: Յօդուածը զոհուականութիւն կրնայ պատճառել ու այսչափ: Անհերքելի է այս դիրքը Աստուծոյ խօսքին հանդէպ: Աղաչենք

Տէրոջը որ բանայ մեր աչքերն ու սրտերը, որ պէսզի իր գործը ու նպատակը չվրիպին, չձախողին մեր մէջ: Ուստի զգաստ եւ բաց ըլլանք իր խօսքին առջեւ եւ տեսնենք թէ ինչո՞ւ:

II Աստուծոյ խօսքին շինարար քննադատութիւնը.—

Երբ մէկը բաց սրտով կը կենայ Աստուծոյ առջեւ, Ան ալ առիթը կ'ունենայ խօսելու անոր: Խօսքը յանկարծ քննադատ կը դառնայ: Ո՞վ ենք մենք, լման կը ճանչնանք մեր սրտերը եւ լաւ մը կը գիտակցինք թէ մինչեւ ի՞նչ բաներ ընելու կարող ենք: Մարդիկ կը ճանչնան մեզ, ո՞րքան, շիտակ են իրենց տպաւորութիւնները: Ո՞չ միշտ: Մարդը զարմանալի յատկութիւններ ունի կեղծելու իր էութիւնը, ու մարդոց մեծամասնութիւնը կ'ապրի երկու կեանքով: Մէկը ներքին սենեակինը, իր մեղքով եւ պղծութիւններով ու իրական գոյներով, միւսը արտաքինը, ներկայանալի, կեղծուած, քաղաքավար եւ խաբող: Մարդ կրնայ երկուքին միջեւ անթափանց պատուած մը հիւսել եւ անոր հետին ծածկելով ներքինը, կը ցուցադրէ լոկ արտաքինը: Այս կերպով է որ կարելի կ'ըլլան բոլոր խաբէութեան, կեղծաւորութեան եւ շլացման տոմսները:

Սակայն երբ Աստուծոյ խօսքը քննադատէ, մարդ յանկարծ երկբերան սոճրի հարուած մը կ'ընդունի, որ կը հասնի մինչեւ իր էութեան ծովին: Ահա՛ մարդուն էն խորունկ տեղը, ալ բան մը չմնար: Յայնժամ Աստուած վիրաւոր մարդը իր կողմը կ'անցնէ եւ թոյլ կուտայ որ Աստուծոյ հետ, եւ Անոր լուսովը դիտէ իր մեղաւոր սրտին վիճակը...: Այսպէս է որ մարդ ինքզինքը կը ճանչնայ եւ ի՞նչ պատկեր: Ի՞նչ մեղք, որքա՛ն ապականութիւն, որքա՛ն թշուառութիւն: Ալ բոլորովին ջախջախուած է ամէն անձնական արդարութիւն եւ մարդ առաջին անգամ ըլլալով կ'զգայ իր «ի՞նչ խղճալի մարդ» ըլլալը: Յետ այնու խիղճը անընդհատ պիտի հռչակէ իր մերկութիւնը եւ աղքատութիւնը: Ալ այս ձայնը չկըտրիր, չկրնար լոել: Մարդիկ յաճախ կը ջանան խեղդել զայն, մտիկ չընել անոր, փախչիլ անոր շէտերէն, բայց եթէ նոյնիսկ յաջողին խփել ականջին, այդ ձայնը օր մը ահաւոր զոչումով պիտի ամբաստանէ զանոնք դատաստանի մեծ աթոռին առջեւ: Ո՞չ, ձայնը չլոեր, ձայնը չկըտրիր, մինչեւ որ խաչին արիւնը այդ սրտին մէջ չկաթի եւ չլուայ զինքը: Փրկչին արիւնը միայն կրնայ մաքրել պղծուած խիղճ մը, ու հոգւոյն խոսքը չդադրիր, մինչեւ որ անառակ որդին

տուն չերթայ հօրը գիրկը նետուելու, հոն՝ ներում, սէր եւ կեանք գտնելու համար:

Բոպէ մը խորհէ: Աստուծոյ խօսքը երբեք այսպէս վիրաւորած է քեզ: Բնաւ խոսված է քու սիրտդ: Մի փորձեր մոռնալ կամ յետաձգել: Ան վիրաւորեց եւ ան կրնայ բժշկել: Դարձիր Անոր որ կրնայ փշրել եւ կապել, որ յօժար է ներելու, մոռնալու եւ փրկելու զքեզ, որ այսօր կը զգաս անարժանութիւնդ:

Հաւատացեալին համար ալ Ս. Գիրքը Քրիստոսի դպրոցն է: Հոն՝ փրկուած մեղաւորը պիտի ճանչնայ ինքզինքը եւ Քրիստոս: Հանդարտած խղճմտանքը վախճանը չէ քրիստոնէական կեանքին, այլ սկիզբը միայն: Վասնզի Աստուծոյ ծրագիրն է՝ մեղաւորը մեղքին դատապարտութենէն փրկելէն յետոյ, զայն ազատել նաեւ մեղքի ու ժէն եւ դարձնել նման Քրիստոսի: Հոս Ս. Հոգին գործի կը լծուի: Մինչ ամէն օր կը կարդանք Ս. Գիրքը, Ս. Հոգին ամէն օր աւելի կը վերցնէ այն խորհրդաւոր քօղը որ մեր աչքերէն կը ծածկէ Քրիստոսի կատարելութիւնները: Եւ ահա օր ըստ օրէ աւելի կը ճանչնանք մեր Փրկիչը, Անոր պաշտելի անձին մասին նոր լոյս, նոր գիտութիւն, նոր հորիզոն, նոր վերելքնե՛ր...

Սակայն քանի՛ հիանալի ֓րկչին լեցունութեանը, իտէալ մարդկութեան եւ հոյակապ նրկարարքին վրայ, այնքան աւելի կը ճանչնանք մեր թերութիւնները, մեր սրտերուն ծուռ ու մուռ հակումները, մեղապարտ վարպետորդի խաղերը, մեղքին թողուցած խորունկ հեռքերն ու անցեալին խոցերը Այսպիսի զարմանալի հայելի մ'է Ս. Գիրքը: Այս պատճառաւ է որ մեծ խորհողը Փառքալ ալ ըսաւ թէ «խղճին խղճմտանքն ալ Աւետարանն է»:

Զարմանալի՛ երանութիւն սակայն: Մինչ հեզ սրտով կ'ընդունինք Աստուծոյ խօսքը, եւ կը ծրոքնք անոր քննադատութեան առջեւ, մինչ կը դիտենք այն հայելիին մէջ «երկնից գեղեցկութիւնը» կազմող փառաւորեալ Տէր Յիսուս Քրիստոսը, Ս. Հոգին իր կողմէ կը ներգործէ մեր մէջ: Իր կրակը կը սրբէ, կը վերցնէ մեղքն ու պղծութիւնը, Աստուծոյ զաւակին պարգեւելով յարաճուն սրբութիւն մը ու նաեւ չափնկալած, թերեւ չգիտցած ատենն իսկ Քրիստոսի երկնային փառքէն մասնիկ մը կ'առնէ մեզի բերելու, փառքով եւ սրբութեամբ պսակելով մեղաւորին ծածկելու: Այս կերպով է որ մենք «նոյն պատկերին կը նորոգուինք եւ փառաց ի փառս Տէրոջը Հոգիէն», օր ըստ օրէ մօտենալով Անոր նկարագրին: Ահա այս է սուրբ ըլլալը:



ԳԱՌՆՈՒԿԻՆ ԵՏԵԻՆ

Ես ալ այն դասակարգին կը պատկանեմ որ հաւատարեալ ծնողք ունեցած ըլլալու երջանկութիւնը կը վայելեն: Հազիւ երեք տարեկան էի, երբ բարեպաշտ հայրս եւ մայրս կորսնցուցի եւ շատ գէշ միջավայրի մը մէջ ինկայ: Հետեւաբար անկիրթ, կոշտ, կոպիտ մեծցայ: Շատ աղտոտ լեզու ունէի, հայհոյանքներուն տեսակները կը հնարէի, կը ծեծուէի, եթէ ձեռքս առիւթը անցնէր, կը զոզնայի: Մինչեւ 15 տարեքիս զիտ շիտակ զրել կարդալ չէի գիտեր: Միայն թէ 9 տարեկան եղած ատենէս, երբ որքանոց կը զըտնուէի, այբ ու բէնը լոկ ճանչնալ սորվեցայ եւ Տէր Յիսուսի մասին: քիչ մը տեղեկութիւն ունեցայ: Փոքր հասակիս մէջ ատրճանակ եւ դաշոյն ունէի: Հակառակ անոր որ ծնողքս ինծի համար շատ աղօթած են որ Սամուէլի պէս Տէրու ջը ծառայ մը ըլլամ, Անոր համար մեծնամ, (այս փափաքով անունս Սամուէլ կոչած են), սակայն ես Սատանային կը ծառայէի — թատրոնի մը մէջ ջուր կը բաժնէի, կառսոն էի, եւ բաց աս-

.....
Քրիստոսի եկեղեցին թող չմոռնայ որ այս է Քրիստոսը սորվելուն մէթոտը: Ուրեմն դառնանք Աստուծոյ խօսքին աննախընթաց ջանքով եւ հաւատարմութեամբ: Մեր աւագանը թող ըլլայ ան, աշխարհի շփումէն ազատուած մեր կեանքերը լուալու: Մեր չափանիշը թող ըլլայ, մեր ապրելակերպը ամէն օր «ճշմարտութեամբ սրբելու»: Մեր ճրագը թող ըլլայ, ամէն օր Աստուծոյ կամփքին գիտութեան եւ աստուածահաճոյ շաւիղներուն տանելու մէջ:

Այս կերպով Աստուծոյ խօսքը բնաւ չպիտի վրեպի զմեզ փրկելու եւ Տէր Յիսուսին նմանեցնելու:

Ուրեմն ինչո՞ւ նոր տարուան սկիզբը եկեղեցին ծովու ձախով չերգէ:—

«Մենք չենք ձգեր Սուրբ Գիրքը, Աստուածաշունչ Մատեան»:

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

տի մէկ չար գործի մէջ ալ ետ չէի մնար:

Բայց բան մը եղայ որ բառերով երբեք չեմ կարող բացատրել: Անիկա փորձառութիւն մըն է որուն մէջէն անցնողը միայն կրնայ ըմբռնել: Ես ալ չէի գիտեր թէ ի՞նչ եղայ, այս բանին անունը ի՞նչ էր: Վերջէն հասկցայ թէ վերստին ծնունդ ըստածը այս է եղեր, որուն մասին Տէր Յիսուս Յովհ. Գ. գլխուն մէջ կը խօսի: Ահաւասիկ իմ անցեալիս մանրանկարը:

Հակառակ այդ անառակ կեանքիս, երբեմն ինքնամփոփումի ժամեր կ'ունենայի: Աչքերս գոցած, կ'երեւակայէի, կը խորհէի որքանոցին մէջ Տէր Յիսուսի մասին լսած բաներուն մասին, նաեւ այն լաւ որոշման վրայ որ ըրած էի, քանզի կը խորհիմ թէ մանկական ապաշխարութիւն մըն ալ ունեցած էի հոն: Այս բոլորը աչքիս առջեւ կուգար: Աստուծոյ Հոգին գործել սկսած էր վերաս եւ զիս հոգիով ու մտքով անհանգիստ, գրեթէ յուսահատ ըրած էր, այնպէս որ մեռնիլս աւելի լաւ կ'երեւէր ինձ, քան առանց նպատակի ապրիլ ու չարչարուիլ: Այսպէս կը ճնշուէի: Առանձին սենեակիս մէջ սկսայ լալով աղօթել, Աստուած իմ, փրկէ զիս, ցուցուր ինծի Քու ճամբադ եւ առաջնորդէ ինձ, օգնէ ինծի որ զրել կարդալ սորվիմ եւայլն: Մինչ արցունքներս առատօրէն կը հոսէին աչքերէս, այտերուս վրայէն սահելով, յանկարծ միտքս բան մը ինկաւ, եթէ ես ճշմարտապէս Աստուծոյ պիտի դառնամ, պէտք է շտկուիմ մարդոց հետ: Օրինակ անոնց հետ որ կռուած եմ: Այս նպատակաւ ազգականներուս տունը գացի, նաեւ անոնցմէ խնդրեցի որ զիս ժողովի տանին, հոն ժողովին մէջ ալ ոտքի ելայ եւ ըսի որ ես տակաւին Տէր Յիսուսը գտած չեմ, ինծի համար աղօթեցէք: Աղօթք մըն ալ ըրի եւ նստայ, բայց փրկութեան ճամբան չէի գիտեր, թէ եւ փրկուելու համար ամէն բան ընելու յօժար էի: Միտքս եկաւ այն հարուստ ընտանիքը, որու շուկայի բաները կը գնէի եւ որմէ յաճախ կը խորհէի, օրինակի համար եթէ 20 դուրուշի բան ծախու առնէի, 30 դուրուշի հաշիւ կը ներկայացնէի: Այսպէս ամէն ատեն սինեմայի դրամս կը հանէի: Հիմա պէտք էի խոստովանիլ եւ այս դրամը հատուցանել: Սակայն իրենք Հալէպէն ուրիշ քաղաք մը գացեր էին, իսկ ես ալ հատուցանելու կարողութիւն չունէի: Բայց նորէն ալ նամակ մը գրել տուի եղելութիւնը պարզելով: Պատասխանը հետեւեալն էր, «Տղաս, քանի որ դուն այս աշխարհի ունայնութիւնը հասկցեր ես, եւ դարձի եկեր ես, ես ալ բոլոր սրտով քեզի կը շնորհեմ ինչ որ պարատ-

կան ես ինձ, ինչ գործի մէջ ալ ըլլաս, յաջող պիտի ըլլաս, Աստուած պիտի օրհնէ քեզ»:

Բայց կատարեալ խաղաղութիւն չունէի դեռ: Տէրը Յովհ. 5. 37ով լուսաւորեց, «Ան որ ինձի կուգայ, բնաւ դուրս չեմ հաներ»: Փարեցայ այս խոստումին եւ կատարեալ հանգիստ ու խաղաղութիւն գտայ, փառք Անոր սուրբ անուանը դարեր անվախճան: Շիտակը խօսելով աւելի դիւրին է ինձ տաան անգամ մեռնելու յօժարիլ, քան թէ Տէր Յիսուս Քրիստոսի ինձի տուած յաւիտենական կեանքը կորսնցնել, որուն երբեք չեմ յօժարիր, քանզի Տէր Յիսուս ինձի համար ամէն բանի մէջ ամէն բան է, անսպառ զանձ է: Տէրը իմ հովիւն է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ:

Տէրը ինձի կարեւոր բաներ սորվեցուց, որոնցմէ մի քանի բաները ըսեմ:

Խոնարհ ըլլալ: «Բայց ես ասոր պիտի նայիմ, այսինքն խոնարհ ու կոտորած հոգի ունեցողին» Եսա. 49. 2: Երբ Աստուծոյ թագաւորութեանը գործին մէջ յաջողութեամբ գործող ու գործածուող բոլոր գործաւորներուն կեանքին նայիմ, մէկ ակնարկով կը տեսնեմ որ անոնք խոնարհ մարդիկ եղած են: Աստուծոյ գործին յառաջացման ամենէն մեծ արգելքը մեր անձն է, մեր եսը: Մովսէսի համար կը կարդանք որ իրեն պէս մարդաբէ մը չեղաւ: Մովսէս շատ մեծ էր, քանզի Մովսէս շատ հեզ մարդ մըն էր: Թուոց ԺԲ. 3:

Հոգեւոր տեսիլք ունենալ: Թափանցող, քննող, հասկցող աչքեր ունենալ: Հաւատացեալը արծիւի նմանցում է. արծիւը շատ հեռուն կը տեսնէ: Անիկա արտօնուած է հասկնալու Քրիստոսի սէրը որ գիտութեան գերազանց է: Տէր Յիսուս այս տեսակ սիրտ մը ունեցողին իմաստուն կ'ըսէ: Երբեք չյօժարիլ միջակորեալ հոգեւոր կեանք մը ապրիլ, երբ Քրիստոս ամէն բանի կարող է: Հոս ինչ որ ցանկանք ան պիտի հնձենք հազարաւոր եւ քիւրաւոր սուրբերուն եւ հրեշտակներուն առջեւ: Հոս, այս աշխարհի մէջ գիրք մը գրաւելու համար մարդիկ որչափ կը ճգնին: Որքա՛ն աւելի կ'արժէ յաւիտենական բաներուն համար յոգնիլ: Հոգեւոր գործը բոլոր տիեզերքի մէջ ամենակարեւոր գործն է, հրեշտակներ կը բազման զայն ընել, բայց իրենց տրուած չէ: Հոգիներ շահողը իմաստուն է:

Ահա այս յուսով կը քալեմ եւ աչքս տնկած իրեն վրայ պիտի քալեմ ուր որ Ան ինձի առաջնորդէ: Գառնուկին ետեւէն:

Կլասիկո

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԵՄԵԱՆ



ԵՐԶԱՆԻԿ ՅՈՅՍԸ ԵՒ

ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՒԱԿԸ

Ամէն մէկ հաւատացեալ ուրախ է երբ կը յիշէ իր Տէրոջ Յիսուս Քրիստոսի մահը, իւրացնելով զայն իրեն համար, գիտնալով որ իր մեղքերուն քաւութեան միակ գինը Անով վճարուած է (Եբր. Ժ. 11, 12, Ա. Պետ. Բ. 24):

Ամէն մէկ հաւատացեալ ուրախ է երբ կը յիշէ իր Տէրոջ գերեզմանէն՝ յարութիւն առնելը, իր մահուամբ եւ յարութեամբ գերեզմանին ու մահուան յաղթելը, իւրացնելով զայն իրեն համար, գիտնալով որ իր Տէրոջ օրհնեալ յարութիւնովը Աստուծոյ առջեւ արդարացած է (Հոով. Գ. 25):

Ամէն մէկ հաւատացեալ ուրախ է երբ կը յիշէ իր Տէրոջ երկինք համբառնալը, գիտնալով որ երկինքը անցած մեծ Քահանայապետ մը ունի, Յիսուսը, Աստուծոյ Որդին, որ միշտ պատրաստ եւ կարող ալ է պէտք եղած ատեն օգնելու եւ շնորհք աւելցնելու:

Առանց Տէր Յիսուսի մահուան, առանց Անոր գերեզմանէն յարութեան, առանց երկինք համբառնման եւ բարեխօսութեան անկարելի պիտի ըլլար մեր փրկութիւնը: Բայց արդեօք ո՞րչափ Աստուծոյ զաւակներ Ս. Գրքին լուսովը իրականապէս գիտեն եւ համոզուած են թէ առանց մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի երկրորդ անգամ գալտեան Աստուծոյ մեզի համար ծրագրած փրկութեան ծրագիրը երբեք կատարեալ պիտի չըլլայ: Գիտնանք որ մեր փրկութեան համար Տէր Յիսուսի խաչին մահը որչափ կարեւոր եւ անհրաժեշտ է, նոյնչափ Անոր գերեզմանէն յարութիւն առնելը կարեւոր է, նմանապէս Անոր երկինք համբառնալը, մեզի համար բարեխօսութիւնը կարեւոր եւ անհրաժեշտ է եւ նոյնպէս Անոր երկրորդ անգամ գալուստը:

Երբ կարդանք Գործք Առաքելոց գիրքը, կը տեսնենք որ սկիզբէն մինչեւ վերջը առաքելներուն բոլոր քարոզներուն եւ վարդապետութիւններուն մէջ վերոյիշեալ սա չորս կէտերը յատուկէն եւ մասնաւոր կերպով շեշտուած են, Քրիստոսի մահը, մեռելներէն յարութիւնը, երկինք համբառնալը եւ Անոր երկրորդ անգամ գալուստը: Քրիստոսի եկեղեցին հիմնուած է այս չորս

Քրիստոնէական ամենակարեւոր հիմնաքարերու վրայ: Առանց ասոնց ոչ մենք կրնայինք փրկուիլ, ոչ ալ Քրիստոս եկեղեցին կրնար ունենալ: Եւ հիմա Քրիստոսի միջոցաւ կատարուած այս մեծ փրկութեան Աւետարանը բոլոր աշխարհ կը քարոզուի, ոչ թէ բոլոր աշխարհի փրկութեան համար, քանզի ներկայ տնտեսութեան մէջ Աստուծոյ ծրագիրը այն չէ որ բոլոր աշխարհ փրկուի, հապա աշխարհէ դուրս կանչուած ժողովուրդ մը (Ekklesia—եկեղեցին) պատրաստուի երկնային Փեսան զիմաւորելու: Հազար ինը հարիւր տարիներէ ի վեր օրհնեալ Ս. Հոգին այս նպատակին հասնելուն համար անդադար կը գործէ, եւ օր մը Իր այս օրհնեալ նպատակին պիտի հասնի երբ Գառնուկին արեամբ գնուած հաւատացեալներուն թիւը կատարեալ ըլլայ եւ տանի զանոնք իբր հարս եւ ներկայացնէ երկնային Փեսային: Այս պիտի ըլլայ երբ բառ առ բառ ի գործ դրուի Ա. Թեա. Դ. 14-16ը, ուր այսպէս կը կարդանք, «Վասնզի Տէրը Ինք ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին փողովը երկինքէն պիտի իջնէ եւ Քրիստոսով մեռածները առաջ յարուսթին պիտի առնեն. ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք, անոնցմով մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեւ ելլելու օդին մէջ եւ այնպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք»:

Ինչ առաջ ըսինք թէ, Գործք Առաքելոց գրքին մէջ Քրիստոսի մահը, յարուսթիւնը, երկինք համբառնալը եւ երկրորդ անգամ զալուստը յատուկէն եւ մասնաւոր կերպով յիշուած եւ քարոզուած են: Ասոր հետ մէկտեղ կը տեսնենք որ երբ Պետրոս առաքեալ իր երկրորդ նամակին մէջ Քրիստոսի երկրորդ զալստեան վրայով կը գրէ, Պօղոս առաքեալին մասին գրելով կ'ըսէ, «Ինչպէս մեր սիրելի եղբայրը Պօղոս ալ իրեն տրուած իմաստութիւնովը գրեց ձեզի, ինչպէս ամէն Թուլթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի» (Բ. Պետ. Գ. 15, 16):

Ուրեմն եթէ Պօղոս առաքեալ իր բոլոր նամակներուն մէջ այս բաներուն, այսինքն Քրիստոսի երկրորդ զալստեան վրայով կը խօսի, նոյնպէս Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս եւ Յուդա առաքեալները իրենց նամակներուն մէջ որոշ կերպով կը գրեն թէ Տէր Յիսուս նորէն պիտի գայ: Ուրեմն Աստուծոյ խօսքին լուսովը սա պարզ եւ անխուսափելի երկու եզրակացութիւններուն կուգանք.— Առաջին, պէտք է ամէն քարոզիչ, հովիւ եւ աւետարանիչ Քրիստոսի երկրորդ զալստեան վրայով քարոզէ, գրէ եւ վար-

“ՏէՐԸ ՉՈՒՇԱՅՆԵՐ ԻՐ ԽՈՍՏՄՈՒՆՔԸ,”

(Ա. ՊԵՏ. Գ. 9)

.....

Ա.— 1937ը....: Զարմանալի՛, դեռ Տէրը չեկա՛ւ....: Մինչդեռ կը փափաքէինք այս «Նոր տարին» օդին մէջ տօնել բոլոր սուրբերուն հետ մէկտեղ: Ոմանց համոզումն ալ այն էր թէ «1937»ը Գառնուկին հարսանեաց ընթրիքին փառաւոր եւ յաւիտենական թուականը պիտի ըլլար: Հասարակաց կարծիքին համաձայն, Տէրը՝ 1935ի ընթացքին կամ դէթ 36ի վախճանին մեր պանդխտութեան տառապալից շրջանը վերջակէտած ըլլալու էր: Նաեւ մենք յափշտակուած ըլլալու էինք ամպերով, օդին մէջ, Տէրոջը հետ ըլլալու յաւիտեան:

Այո՛, կ'ականկալէինք որ Տէրը գար: Կ'ականկա-

.....

զապետէ իր ունկնդիրներուն, որ Տէր Յիսուս երկրորդ անգամ պիտի գայ «Դիւքերուն ըսածին համեմատ» Յովհ. ԺԴ. 13, Փիլ. Գ. 20, 21, Ա. Թեա. Դ. 15, 16, եւն. Երկրորդ, ամէն մէկ հաւատացեալ ճշմարտապէս պէտք է գիտնայ թէ Քրիստոսի երկրորդ զալստեան վարդապետութիւնը Քրիստոսի եկեղեցիին ամենակարեւոր միակ նպատակակէտն է (goal) (Ա. Յովհ. Գ. 1-3), միակ Յոյսն է (Տիտ. Բ. 13), միակ մխիթարութիւնն է (Ա. Թեա. Դ. 15-17):

Երանի այն Աստուծոյ զաւակին որ իր կեանքի պայքարին մէջ իր առջեւ եկած բոլոր նեղութիւններուն, դժուարութիւններուն եւ Սատանայի յարձակումներուն ատեն՝ կը վստահի իր Տէրոջը հաւատարմութեան եւ անոր խոստումներուն, որ ըսած է թէ «Բնաւ քեզ պիտի չթողում ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ» (Եբր. ԺԳ. 5) եւ ամէն օր Ս. Հոգիով լեցուն կեանք մը ապրելով Տէրոջը հնազանդութեան մէջ, ուրախութեամբ կ'ըսապառէ իր երկնային Փեսային, որ այս օրերս մէկէն երկինքէն ձայն մը տալով Իրենները Իր քով պիտի առնէ:

Դուն ալ այս ամենօրհնալ Աստուծոյ Որդին Քրիստոս Յիսուսը իբր քու Փրկիչը ընդունած եւ Անոր արեանը տակ ապաստանդ գտած ըլլալով այն սուրբ առաւօտեան սպասողներէն ես:

Տէրոջը ծառան, ձեր եղբայրը
Վեր. Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

Յիւլատէլֆիա

լէինք որ յափշտակիչ փողը հնչէր, «Ահա Փեսան կուգայ, զԱնիկա դիմաւորելու ելէք»:

Ափսո՛ս սակայն, դեռ Տէրը չեկաւ: Դեռ ազդարարութեան փողը չհնչեց: Դեռ մեր հաւատքը տեսութեան չփոխուեցաւ, դեռ մեր խոնջ ու արիւնոտ ոտքերը «Հօրը տունը» չթեւակոխեցին, ոչ ալ մեր կարօտաբաղձ ու արցունքոտ աչքերը փառաց Տէրը, թաղաւորը Իր վայելչութեանը մէջ տեսան:

Հարկ է ուրեմն մեզի դեռ փորձուի՛լ ու տառապի՛լ: Դեռ աշխատի՛լ ու պայքարի՛լ: Դեռ հաւատա՛լ ու սպասե՛լ: Արդարութեան Արեւակը անշուշտ պիտի ծագի, վառնդի պրուած է, «Եթէ ուշանայ, Սնոր սպասէ»:

Միայն թէ մեր երկար սպասումները, նաեւ անկատար ակնկալւածութիւններն ու դառն յուսախաբութիւնները կը մղեն մեզ կարծելու թէ Տէրը կ'ուշացնէ Իր խոստմունքը:

Բ.— Բայց մեր յստախաբութիւններէն աւելի ծանր եւ լուրջ պարագայ մը կալ որ մեզի կարծել կուտայ թէ Տէրը Իր խոստմունքը կ'ուշացընէ.— Ընդհանուր Աստուծոյ զաւակներուն աղեխարշ հառաչանքն է այն, որ դէպի վեր կը բարձրանայ «Շուտ եկուր, Տէր Յիսուս»:

Ժամանակէ մը ասդին Նորհրդային սահմաններէն ներս, Սիպերիոյ սառնամանիքներուն մէջ աքսորուած եւ տաժանակիր աշխատանքի մատնուող մեր հաւատակիցները կ'աղաղակեն շարունակ, «Այ մինչեւ ե՞րբ ով Տէր, ալ մինչեւ ե՞րբ...»: Անցեալին մէջ Աւետարանին շահակիրը եւ աշխարհածաւալ արթնութեանց ռահվիրայ հանդիսացող Գերմանիան այսօր ցեղակրօններու բռնութեան տակ կը հեծծէ: Հոն ալ Քրիստոսի վկաները եւ Աստուծոյ Իսրայէլը ամենակատաղի ատեւութեան ենթարկուած են: Անոնց աղիողորմ կանչերուն ամէն օր ականջալուր կ'ըլլանք լրագիրներու միջոցաւ:

Բայց մարտիրոսաց այս հառաչանքն ու կարօտի կանչը ոչ միայն Ռուսիոյ աքսորավայրերէն կամ Գերմանիոյ խորերէն, այլ աշխարհիս չորս ծայրերէն կը բարձրանան: Անխաիր, Աստուծոյ ընդհանուր զաւակները ճշնաժամային վալրկեաններու մէջ կ'ապրին: Ամէնն ալ բորբոքած կրակէ անցնողներու պէս կ'աղաղակեն, «Շուտ եկուր, Տէր Յիսուս»: Այսպէս բոլոր սուրբերը հաւաքաբար՝ որպէս հալածեալ եկեղեցի եւ որպէս թշնամանուած հարս, Փեսան կը կանչեն սրտառուչ հառաչանքով «Ամէն, եկուր, Տէր Յիսուս»:

Դեռ անպատասխանի մնացող այս աղեխարշ

հառաչանքները, աւելի իրաւունքով մեզի ենթադրել կուտան թէ Տէրը Իր խոստմունքը կ'ուշացնէ:

Գ.— Անօրէնութեան խորհուրդին զօրացումը, եւ Աստուծոյ ու Իր Օծեալին դէմ ցցուող համամարդկային ապստամբութիւնը աւելի պերճախօս պատճառներ են մեզ համոզելու թէ Տէրը Իր խոստմունքը կ'ուշացնէ:

Զանգուածաբար ներկայ մարդկութեան հոգեւոր վիճակը անբաղդատելիօրէն աւելի ծանրակշիռ եւ ողբալի է, քան Ջրհեղեղեան ու Սողոմական շրջաններուն: Արդի համաշխարհային պղծութեան պատիկ մէկ մանրանկարը միայն տուած պիտի ըլլայինք Բ. Տիմ. Գ. 4-4 եւ Հով. Ա. 18-32 համարներով: Մեղաց գաւաթը կը յորդի՛...

Բայց աւելի պիտի ապշինք Տէրոջը լուրջութեանը վրայ, երբ նկատի առնենք «քաղցիկդի պէս ճարակող» կազմակերպեալ ապստամբութիւնը: Այսօր Ռուսիոյ մէջ «Անաստուածներու ընկերութիւնը» աւելի քան 7 միլիոն անդամներու հոգալական թիւ մը կը ներկայացնէ: Նոյնատեսակ դիւային ընկերութիւններ կազմակերպուած են Ամերիկայի եւ Եւրոպայի զրեթէ բոլոր երկիրներուն մէջ: Սաղ. Բ. 4-5 համարներուն տառացի կատարումը կը տեսնենք մեր աչքերով: Ու կը զարմանանք թէ երկինքը բնակողը ինչո՞ւ ծաղըր չընէր զանոնք: Ինչո՞ւ իր բարկութիւնովը չխօսիր ու Իր սրտմտութիւնովը չխոտմեցնէր զանոնք:

Դեռ չպատժուած այս յարածուն անօրէնութեանց եւ ապստամբութեան կուտակումը, ակամայօրէն մեզի խորհիլ կուտան թէ Տէրը որքա՛ն կ'ուշացնէ Իր խոստմունքը:

Դ. Մարդկային բարոյական եւ հոգեւոր ծայրայեղ անկման հետ՝ նաեւ քաղաքական ու ընկերային, տնտեսական ու բներեւութական բոլոր նշանները կուգան աւելի հաստատուելու մեզ այն պաղափարին մէջ թէ Տէրը կ'ուշացնէ Իր խոստմունքը:

Մեր օրերը բոլորովին եղակի էջ մը կը բանան մարդկային զարաւոր պատմութեան մէջ: Զարհուրելի արագութեամբ իրարու յաջորդող դէպքերը աննախընթաց պատահարներ են: Դառնաղէտ բիւր իրադարձութիւններու թատերաբեմ հանդիսացող այս մեր մոլորակը, կարծես սկսած է գողալ ու ճաքճքիլ իր վրայ ծանրացող անօրէնութեանց բեռներէն: Ու մենք ապշուլթեամբ

ականատես կ'ըլլանք Մատթ. ԻԴ. եւ Ղուկ. ԻԱ. գլուխներուն իրերայաջորդ դէպքերուն, որոնք վախճանը կը ծանուցանեն (Ղուկ. ԻԱ. 28):

Այսպէս կը լսենք մենք պատերազմներ ու պատերազմի լուրեր: Ազգ ազգի վրայ կ'ելլեն, սովեր (համատարած անգործութիւնը), մահտարածամենք, տեղ տեղ մեծ երկրաշարժութիւններ կը պատահին: Սուտ քրիստոսներ ու սուտ մարգարէներ ալ կը նշմարուին հոս ու հոն: Աստղաբաշխական պարբերաթերթերու հետեւողներ միայն գիտեն թէ արեգակին ու աստղերուն եւ լուսինին մէջ ի՞նչ ապշեցուցիչ նորութիւններ կը յայտնուին: Երկինքէն ի՞նչ սոսկալի բաներ ու մեծ նշաններ կը տեսնուին: Յիրաւի այս է ծանուցումը «չար ժամանակները»: Վասնզի ծովը ու աւիքները կը գոռան եւ մարդոց սիրտերը կը նըւազին իրենց վախէն ու աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն:

Զարմանալի՛, այս բոլոր բաները եղան ու կ'ըլլան, բայց դեռ Որդին Մարգարայ ամպի մէջ եկած չերեցաւ (Ղուկ. ԻԱ. 27): Ու կարծես այս բոլոր յառաջացեալ նշանները իրաւունքով մեզի խորհիլ կուտան թէ՛ Տէրը ուշացուցած է իր խոստմունքը:

Ե.— Թուեալ չորս կէտերէն աւելի աչքառու պատճառ մըն ալ կայ, որ մեզ կը քաջալերէ այն կարծիքին մէջ թէ Տէրը կ'ուշացնէ իր խոստմունքը: Եւ այդ՝ մեր «ԵՐԶԱՆԻԿ ՅՈՅՍԸ» նսեմացնելու աշխատող արդիականներու նախատինքն է:

Յիրաւի աշխարհ կը ծաղրէ Տէր Յիսուսի երկրորդ գալստեան վարդապետութիւնը: Աշխարհիկներ կը ծիծաղին մեր մխիթարութեան միակ աղբիւրը եղող «Յափշտակութեան յոյսին» վերայ: Այս նախատինքը խիստ ծանր է մեզի համար: Բայց աւելի ընդվզեցուցիչ է տեսնել Աւետարանի ծանօթ եւ ճշմարտութեան տեղեակ անձեր, ըսել կ'ուզեմ կաթողիկ, յուսաւորչական եւ բողոքական եկեղեցականներ, որոնք նիւթապաշտներու հետ միախառնուող կը ծաղրեն Հարսը իր «երջանիկ յոյսին» համար, կը նախատեն եկեղեցին իր օրհնեալ ակնկալութեան եւ սպասումին մէջ, եւ հոգի ի բուն կը ճգնին արմատախիլ ընելու հաւատացեալներուն սրտէն Աստուծոյ այն փառաւոր խոստումը, որ մշտաբերդի ակն է հոգեւոր զօրութեան, սրբութեան եւ պողաբերիչ կենսունակութեան:

Այո, ամէն բան տանելի ու ներելի է մեզի համար: Ամէն բանի կրնանք համբերել ու սուկալ: Բայց Աստուածաշունչով մեզի կտակուած



ԿՈՐՍՈՒԱԾ ՈԶԽԱՐԸ

Փետրուարի ցուրտ գիշեր մը՝ սենեակիս դուռը զարնուեցաւ: Խեղճ մարդ մը ներս եկաւ եւ խնդրեց որ իր մէկ հատիկ զաւակը այցելեմ: Անմիջապէս ճամբայ ելանք ու եկանք ամայի ու անշուք խրճիթ մը: Անկիւն մը, յարդի դէզի մը վրայ պառկած էր խեղճ տղան, 17 տարեկանի մօտ եւ թոքախտի վերջին աստիճանին մէջ:

Մօտենալով այցելութեանս պատճառը ըսի. յետոյ քանի մը պարզ հարցումներ ըրի փրկութեան յոյսին եւ յաւիտենական աշխարհին վրայով: Նա բոլորովին տգէտ էր այս բաներուն մէջ: Միայն Աստուծոյ եւ գալու դատաստանին մասին տարտամ բաներ մը լսած կ'երեւէր: Արդէն կարգաւ չէր գիտեր: Ս. Գիրքը անոր համար գոց գիրք մըն էր եւ իր հոգիին փրկութեան խնդրը բոլորովին անտեսուած: Ես գրեթէ յուսահատութեան եւ սարսափի մէջ էի, քանզի կը գտնուէի հոգիի մը առջեւ որ յաւիտենականութեան սեմին վրայ կը գտնուէր բոլորովին անպատրաստ: Սիրտս Աստուծոյ վերցնելէ յետոյ հիւանդին ըսի, «Խեղճ տղաս, վախճամ թէ շատ հիւանդ ես, այս հազը շատո՞նց ունիս»:

— «Այո», պատասխանեց նա, «շատոնց ի վեր, գրեթէ տարի մը կ'ընէ»:

— «Ինչպէ՞ս առիւր զայն. Իրլանտացի տղայ մը ցուրտին վարժուած կ'ըլլայ»:

— «Ոհ, ըսաւ, «ես ալ շատ լաւ էի մինչեւ այն սարսափելի գիշերը, երբ ոչխարներէս մին

.....

«Երջանիկ Յոյսին» դպչող ոեւէ անձ, եւ մեր անխախտ ակնկալութիւնը ի դերեւ հանելու ձգտող ոեւէ ջանք անտանելի ըլլալու աստիճան ընդվզեցուցիչ են միանգամայն:

Ու երբ կը լսենք բազմաժողով ծաղրածուններու այս հանկերգը «Ո՛ւր է Անոր գալուն խոստմունքը», կարծես ակամայ ստիպողականութեամբ մը կը մղուինք խորհելու թէ Տէրը կ'ուշացնէ իր խոստմունքը:

(Շար.)

ՍԱՄՈՒԷԼ Պ.

կորսուեցաւ եւ հայրս զայն փնտռելու ղրկեց զիս: Թէպէտ ձիւնին մէջէն կը քալէի եւ ցուրտ քամին ոսկորներուս կը թափանցէր, բայց ես բնաւ հոգ չէի ընէր, բոլոր ջանքս հօրս կորսուած ոչխարը գտնել էր»:

— «Ո՛հ, այո, մինչեւ զայն գտնելու չգաղարեցայ. յետոյ ուսիս վրայ առնելով տուն բերի եւ հայրս ու մայրս, դրացիներն ամէնը ուրախացան»:

Հրաշալի օրինակ մը Աւետարանին պատմութեան: Ոչխարը կորսուած է. հայրը իր որդին կը ղրկէ զայն գտնելու: Որդին չարչարանքով փնտռելով կը գտնէ կորսուած ոչխարը. ուսերուն վրայ առած տուն կը բերէ եւ ուրախութիւն կ'ըլլայ զդրացիներով մէկտեղ: Ղուկասու Աւետարանին ԺԵ. գլուխը բանալով այս մահամերձ պատանոյն կարգացի կորսուած ոչխարին առակը: Նա խորունկ հետաքրքրութեամբ հետեւեցաւ եւ լաւ հասկցաւ: Տէրը իր շնորհքով անոր սիրտը բացաւ եւ նա ընդունեց Քրիստոսը իբր իր անձնական Փրկիչը եւ իր Բարի Հովիւը: Քիչ յետոյ նա խաղաղութեամբ մեռաւ:

Ընթերցող, միայն քեզ յուզելու համար չէ որ կը պատմենք այս պատմութիւնը, հապա քեզ ալ հրաւիրելու Յիսուսի եւ խաչով փրկութեան: Հիմա է ժամանակը որ դուն ալ զԱյն իբր քու Փրկիչդ ու քու Հովիւդ ընդունիս:

Սիրելի հոգի, այսօր թերեւս առաջին անգամն ըլլալով «Բանբեր»ը ձեռքդ կ'իյնայ կարգալու: Թերեւս հետաքրքրութեամբ բացիր զայն գիտնալու համար թէ ի՞նչ բաներ գրուած են հոն: Առաջին առթիւ գիտցիր թէ «Բանբեր»ի խմբագրութեան փափաքն է քեզի յայտնել թէ Բարի Հովիւ մը կայ որ կը փնտռէ զքեզ, կը փնտռէ շատ տարիներէ ի վեր, կը ձայնէ քեզի, մօտեցած է քեզի, ականջ կը դնէ քու ձայնդ լսելու եւ զքեզ վերցնելու: Ձայնէ միայն, աղաղակէ՛, Տէր, օգնէ ինձի: Անիկա պատրաստ է զքեզ վերցնելու իր ուսին վրայ եւ տանելու փարախը:

«Բանբեր»ի բաժանորդ եղող սիրելիին ալ Յունուարի առաջին թիւով մեր խօսքը այս է — Սիրելիս, որքա՛ն ուրախ ենք որ «Բանբեր»ը տարուէ տարի կը կարդաս: Անշուշտ կ'օգտուիս անկէ, գիտնիք զայն: Բայց այս շահը մտքի գիտութեան շահ մը միայն չըլլայ, ապա թէ ոչ, մենք շատ պիտի ցաւէինք: Այս շահը ըլլալու է հոգիի եւ սրտի շահ: «Բանբեր»ը աղանիւթի թիւ առած կուգայ այս առաջին թիւով քեզի յայտնելու մեր սրտագին իղձը: Տէր Յիսուս, մեր սիրելի Փրկիչը որ քեզ այնքան կը սիրէ, քեզի համար իր կեանքը տալէ յետոյ կը փափաքի

քեզ ալ որպէս ազատացեալ մը ողջունել եւ փրկութեան վստահութիւնը տալ քեզի, ա՛հ, ո՛չ միայն այս, հապա իր ուսին վրայ՝ աշխարհի յորձանքներէն ու փորձանքներէն պահելով կ'ուզէ տանիլ զքեզ իր յաւիտեական ժառանգութեան, որպէսզի դուն հոն իրեն ժառանգակից ըլլաս: Աստուծոյ մեծ փառքին մէջ:

«Բանբեր»ի միակ իղձը այս է քեզի համար՝ կարգաւ անգամ մըն ալ մեր առաջին էջի վերտառութեան շուրջը գտնուած երեք համարները. առաջ քեզի եւ մեզի համար խոստում եւ վկայութիւն են եւ կրնան իրականանալ մեր եւ ձեր մէջ:

Սիրելի, «Բանբեր»ը այս տարի ի զուր թող չմտնէ քու տունդ, ի զուր համարօրէն թող չդուրի քու սեղանիդ կամ գրատախտակիդ վրայ: Անիկա թող խօսի քեզի խօսուն ոճով մը, սիրուն եւ կենդանի, Քրիստոսի քաղցր ձայնին որպէս թարգման...

«Ձանիկա իր ուսին վրայ դրաւ»: Այո՛, նոր գտնուած գառնուկը Տէրը ուրիշ տեղ չդնէր, այլ իր ուսին վրայ. որպէսզի կարենայ իր ձեռքերովը պաշտպանել եւ իր աչքերովը հսկել անոր վրայ:

Եկո՛ւր ուրեմն, կորսուած ոչխար, գտիր քու Փրկիչդ: Այս տողերը զողը արցունքով կը յիշէ այն սքանչելի տեսարանը, որ տարիներ առաջ, հիւանդանոցի մը անկեան մէջ տեղի ունեցաւ իր եւ թոքախտէ տառապող երիտասարդի մը միջև: Խօսակցութեան նիւթը Փրկիչն էր, վերը գրուած պատկերին բարի Հովիւը, որ ոչխարը այնքան կը սիրէր, որ գտաւ եւ զանիկա իր ուսին վրայ դնելով տարաւ:

— Իրա՞ւ, զի՞ն ալ կը սիրէ, զի՞ն ալ:

— Այո՛, քեզ ալ կը սիրէ ու քեզ ալ իր ուսին վրայ կ'ուզէ առնել:

— Յիսուս ինձի ալ այսպէս կրնա՞յ ընել:

— Այո՛, քեզի ալ կրնայ ընել: Այս պատկերը իրեն եւ քու պատկերդ կը ցուցնէ:

— Ուրեմն այս գառնուկը ե՞ն հմ, կրնա՞մ հաւատալ, կրնա՞մ վստահիլ, ես չարս, մեղաւորս:

— Այո՛, կրնաս վստահիլ թէ դուն ես...

Երկու կարճ եւ սրտաբուղի աղօթքներ բարձրացան առ երկինք, միեւնոյն ատեն արցունքներ հոսեցան երկու խօսակիցներու աչքերէն, զղմման եւ ապաշխարութեան եւ ուրախութեան արցունքներ:

Քանի մը շաբաթ վերջը երիտասարդը հիւանդանոցին մէջ մեռած գտնուեցաւ իր նոր կտակաւ:



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

«ՏԵՐՈՋԸ ՔՈՒ ԱՍՏՈՒԾՈՅԻ ԱՆՈՒՆԸ,

(ԵԼԻՑ Ի. 7)

oo — oo

Աստուծոյ Անուան յայտնութիւնները Ս. Գիրքէն սերտել խիստ շահեկան է: Դիպուածով կամ ոճի փոփոխութեամբ եւ կամ հեղինակի տարբերութեամբ չէ՛ որ տարբեր անուններ գործածուած են. այսպէս, տեղ մը «Աստուած» (Եբր. Էլօհիմ) Ծնդ. Ա. 1, ուրիշ տեղ մը «Տէր Աստուած» (Եհովա Էլօհիմ) Ծնդ. Բ. 4, ուրիշ տեղ մը «Բարձրեալ Աստուած» (Էլ-Էլիօն) Ծնդ. Ժ. 18, ուրիշ տեղ մը «Տէր Եփուս» (Աստուած-Եհովա) Ծնդ. ԺԵ. 2, ուրիշ տեղ մը «Ամենակարող Աստուած» (Էլ-Շատտաի) Ծնդ. ԺԷ. 1, ուրիշ տեղ մը «Յաւիտենական Աստուած» (Էլ-Օլամ) Ծնդ. ԻԱ. 33 եւ ուրիշ տեղ մը «Զօրութեանց» (Ա. Թագ. Ա. 3), «Զօրքերուն» (Սաղ. ԻԴ. 10), կամ «Զօրաց Տէր» (Սաղ. ԽԶ. 7) (Եհովա-Սաբաօթ) անուններուն կը հանդիպինք: Այս անուններէն իւրաքանչիւրը եւ իւրաքանչիւր տեղւոյ մէջ Ս. Հոգին մասնաւոր նպատակով գործածել տուած է Ս. Գիրքի զանազան հեղինակներէն իւրաքանչիւրին: Այսպէս, մինչ «Զօրաց Տէր» անունը բնաւ չէ յիշուած Հնգամատեանին մէջ, Երեմիա (Իսրայէլի մօտալուռ ազգային դատաստանը ազգաբարոյ մարգարէն) զայն մօտ 80 անգամներ կը գործածէ:

Մենք այս անգամ պիտի սերտենք հայերէնի մէջ «Տէր» թարգմանուած «Եհովա» անունը: Եհովա անունը իր նախնական նշանակութեան մէջ «Ինքնագոյ էական» է, Ելից Գ. 14ի «Ես եմ Որ էն» Բայց Եհովա անունը կը նշանակէ նաեւ

բանը եւ «Բարի Հովիւ»ին պատկերը իր կուրծքին սեղմած:

Այո՛, Բարի Հովիւը իր ուսին առած զայն իր ժառանգութեանը փոխադրած էր:

Ինչ Բարի Հովիւ: Այն բարի է նաեւ քեզի և ինծի համար:

Փա՛նք Բիւզ, Բարի Հովիւ:

տեւական եւ աւելցող ինքնայայտութիւն:

Եհովա անունը որոշապէս Աստուածութեան փրկագործական անունն է: Երբ մեղքը աշխարհ մտաւ, «Եհովա Աստուած» էր որ փնտոնեց մեղանշողները եւ անոնց «կաշիէ հանդերձներ» հագցուց (Ծնդ. Գ. 9-13, 21): Աստուած Ինքզինքը առաջին անգամ որոշ կերպով Եհովա անունով յայտնեց, երբ ուխտի ժողովուրդը Եդիպտոսէ պիտի փրկէր (Ելից Գ. 13-17):

Իբր ֓րկիչ, Եհովա անուան հետ կը յիշուին Աստուածութեան այն յատկութիւնները որ զործադրութեան կը դրուին մարդուն մեղքին եւ փրկութեան հետ առնչաբար:

1. Սրբութիւնը (Ղեւտ. ԺԱ. 44, 45, ԺԹ. 1, 2, Ի. 26, Ամբ. Ա. 12, 13):

2. Մեղքի հանգէպ Անոր ատելութիւնը եւ դատապարտութիւնը (Բ. Օրին. 1Բ. 35-42, Ծնդ. 2. 5-7, Սաղ. ԺԱ. 4-6, ԿԶ. 18, Ելից. 1Դ. 6):

3. Անոր մեղաւորները սիրելը եւ փրկելը, բայց միշտ արդարութեամբ (Ծնդ. Գ. 21, Ը. 20, 21, Ելից ԺԲ. 12, 13, Ղեւ. ԺԶ. 2, 3, Եսայ. ԾԳ. 5, 6, 10): Ս. Գրքին մէջ Եհովայի կողմէ փրկութիւն չկայ առանց զոհի:

Աստուծոյ մարդուն հանդէպ փրկագործական յարաբերութեան մէջ Եհովա անունով կազմուած 7 բարդ բառեր կան որ զԱյն կը յայտնեն իբր կորսուած մարդուն փրկութեան պէտքը լեցնող կատարելապէս սկիզբէն մինչեւ վերջը: Այս բարդ բառ անուններն են.

ա. Եփուսյիւ — Տէրը պիտի նախախնամէ (ողջակէզ մը) Ծնդ. ԻԲ. 13, 14:

բ. Եփուարաֆա — Ես եմ Տէրը որ քեզ կը բժշկեմ Ելից ԺԵ. 26: Հոս թէս աւելի ուղղակիօրէն մարմնաւոր բժշկութեան համար գործածուած՝ բայց աւելի խորունկ իմաստով հոգիի բժշկութիւնը կը հասկցուի:

գ. Եփուանիսի — Տէրը իմ դրօշակս է (Ելից ԺԷ. 8-15): Թշնամին Ամաղէկն էր, մարմինին մէկ օրինակը, եւ այդ օրուան պատերազմը Գաղ. Ե. 17ի հոգիին մարմնոյ դէմ պատերազմն է:

դ. Եփուաշալուս — Տէրը մեր խաղաղութիւնը Դատ. 2. 24 (ողջակէզով խաղաղութիւն (հ. 19-21) տես նաեւ Հոով. Ե. 1, Եփես. Բ. 14, Կող. Ա. 20):

ե. Եփուարաֆ — Տէրը իմ հովիւս է Սաղ. ԻԳ. 1: Սաղ. ԻԲ. Ի մէջ Եհովա խաղաղութիւն կ'ընէ խաչին արիւնով եւ ԻԳ. Ի մէջ Եհովա աշխարհի մէջ եղող իր հօտը կը հովուէ Յովհ. Ժ. 7, 9:

զ. Եփուասրտգընու — Տէրը մեր արդարութիւնը Երեմ. ԻԳ. 6: Սերտէ թէ ի՞նչ պարագայով գործածուած է հոս այս անունը:

է. Եփովաշանու — Տէրը հոն է (ներկայ է) Եզկ. 35: Այս անունը կը նշանակէ Եհովայի ներկայութիւնը (Իր ժողովուրդին հետ մշտատես բնակելով: Տես Երեմ. ԼԳ. 14, 15, Ա. Մնաց. ԺԶ. 27, 33, Սաղ. ԺԶ. 11, Սաղ. ՂԷ. 5, Մատթ. ԻԸ. 20, Եբր. ԺԳ. 5:

Եհովա անունը նաեւ Աստուածութեան որոշիչ անունն է Անոր Իսրայէլի ժողովուրդին հետ ունեցած ուխտին վերաբերեալ.

Եհովա քու ողջակէզդ եղած է, քու բժիշկդ է, քու դրօշակդ է, քու խաղաղութիւնդ է, քու հովիւդ է, քու արդարութիւնդ է եւ մշտատես քու ներսիդի օթեան ըսող Տէրդ է:

ՊԱՏԱՆԵԱՅ



ԵՍ ԱԼ ՏԵՐ ՅԻՍՈՒՍԻ

ՀԱՄԱՐ ԿԸ ՎԿԱՅԵՄ

Ծնած եմ 1921 Մայիս 1ին Հայկաի մէջ: Բաւրոյական ընտանիքի զաւակ ըլլալով մեծցած եմ բողոքական կրթութիւն անցնելով: Երկու եղբայր եւ երկու քոյր ունիմ որ ինծմէ փոքր են եւ այսպէս մենք մեծցած ենք մեր մօրը ձեռքին տակ որ իր բոլոր ջանքերը խնայած չէ մեր բաւրոյական եւ հոգեւոր կրթութեան համար եւ իր աղօթքները ուղղած Տէրոջը որ մեզ չարէն պահէ եւ գմեզ իր Հոգիովը լուսաւորէ գիւնքը ճանչնալու: Փառք տալու եմ Տէրոջը որ մայրիկիս աղօթքները ի դուր անցած չեն ու ես մօրս զաւակներէն ամենէն մեծը, յանձնուեցայ Տէրոջը անցեալ տարի երբ 14 տարեկան էի:

Գիտէի թէ ինծի կը պակսէր փրկութեան վըստահութիւնը: Ես չէի կրնար ըսել թէ մեղքէս ազատուած եմ, ուստի թէ եւ մեծ մեղաւոր մը չէի, բայց ինծի պէտք էր նորէն ծնանիլ Յովն. Գի. համաձայն, Փրկչին փրկարար խաչին տակ գալ, հոն լուացուիլ ու մաքրուիլ Գառնուկին թափած արիւնովը: Իրաւ ես յաճախ կիրակի օրերը քորոզած զոյններուն ներկայ կը գտնուէի, նոյնպէս ալ մեր հովիւին մեզի համար ըրած Երկուշաբթի օրուան Ս. Գրքի դասերուն, նոյնպէս աղօթած զոյններուն ներկայ եղած էի, բայց այսքանը իմ հոգիիս փրկուելուն համար բաւական չէր, ես նորէն մեղքի ծառայ էի, ընդհակառակը այդ բոլոր

հաւաքոյթները պատճառ եղան զիս լուսաւորելու եւ ինծի հասկցնելու թէ ես թշուառ մեղաւոր մըն եմ եւ ինծի պէտք է նորէն ծնանիլ, Ասոր համար պէտք էր որ անձս ուրանայի, խաչս վերցնէի եւ Յիսուսի ետեւէն երթայի (Մարկ. Ը. 34): Այսպէս Տէրը հաճեցաւ որ Զորեքշաբթի իրիկուն մը ես Իրեն նուիրուիմ իմ բոլոր մեղքերովս Անոր դալով: Թէ եւ կ'ապրիմ շատ տկարութեամբ, բայց փրկութեան ուրախութիւնն ունիմ եւ լեցուած եմ այն յուսով որ Տէրը Իրեն յուսացողներուն հետ է եւ բոլոր տկարները Ինք պիտի պահէ եւ զօրացնէ: Փառք կուտամ որ Տէրը Իր խոստումը իմ վրաս ի գործ դրաւ եւ պիտի դնէ ալ, վասնզի այս խոստումները ունիմ Տէրոջմէս որ եթէ մէկը իր յոյսը Անոր վրայ դնէ, բնաւ պիտի չամչնայ: 2է՞ որ ըսաւ, «Ինչ տուէք այդ մանր աղոցը որ ինծի դան, եւ մի արգիլէք ատոնք ինծի գալէ, վասնզի երկիրքի թագաւորութիւնը անոնցն է», եւ ես մանուկէ մը աւելի մեծ եմ: Եւ նոյնպէս Ինք է որ կ'ըսէ, «Բաշ եղէք, ես եմ, մի վախնաք (Մատթ. ԺԳ. 27): Այս խոստումն ալ ինծի համար է, Անոր փառք յաւիտեանս յաւիտենից:

Ինչպէս եւ շատ դժուարութիւններէ եւ կասկածներէ անցայ, աղօթքս է որ բոլոր նոյն դժուարութիւններէ անցնող իմ սիրելի հառակակիցներս ալ թօթափեն մեղքը եւ զիրենք սիրող Փրկչին գան, Անիկա պիտի ընդունի եւ պիտի փրկէ գանոնք:

ՀՈՒՏԵՐ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Մարտէյլ



ԱՅՍՊԷՍ ՊԵՏԻ Է ՀԱՆԱՏԱՆԻ

(ՅՈՎ. Գ. 36)

2է՞ որ պղտիկները շատ կը սիրեն պատմութիւն լսել կամ կարդալ: Լաւ, ես ալ, սիրելի պղտիկներ, ձեր շատ սիրած «Բանբեր»ին միջոցով, ձեզի աղուոր պատմութիւն մը պիտի ղըրկեմ: Եւ ասիկա, Ծնունդի կամ Կաղանդի նուէր մը պէս ընդունեցէք իմ կողմէս: Վիճէթ ա մը անոյ ֆրանսացի աղջնակի մը պատմութիւնն է այս, որ օրհնութիւններով լեցուն ծրարի մը կը նմանի: Հիմա սկսիւք պատմութեան.

Դիւղացի մարդ մը, իր ազարակին տանը տակը, հաստ պատերով, մեծ եւ խորունկ մասնան մը շինել տուած էր: Մասնան միայն պզտիկ լուսամուտ մը ունենալուն համար շատ մուծ էր:

Օր մը, երբ պիւղացին մասնան իջած էր, իր 7 տարեկան աղջիկն ալ ուզեց անոր հետեւիլ: Հագիւ քանի մը աստիճանամաստ իջած էր աղջիկը, երբ ինքզինքը միջուկեան մէջ գտնելով, սկսաւ աղաղակել, «հայրիկ, հայրիկ»:

Ի՞նչ կայ, Վիօլէթ, ես հոս եմ, ի՞նչ կ'ուզես» պատասխանեց հայրը խաւարին մէջէն: «Կ'ուզեմ քովդ գալ հայրիկ» շարունակեց աղջիկը: «Ա՛ւ, ես հոս եմ, ճիշդ մօտդ եւ քեզ կը տեսնեմ» պատասխանեց հայրը թեւերը բանալով, «նետուի՛ր, կս քեզ կը բռնեմ»: Վիօլէթ առանց հայրը տեսնելու նետուեցաւ: Հօրը երկու զօրաւոր բազուկները զայն գրկեցին: Ուրախութեան եւ շրնորհակալութեան սուր ճիչ մը թռաւ Վիօլէթի բերնէն: Առանց տեսնելու նետուեցաւ: Հաւատքով փնտրեց իր հօրը: Եւ հիմա որքա՛ն ապահով եւ երջանիկ էր հօրը գրկին մէջ: Վիօլէթ ուրախութենէն պինդ փաթթուեցաւ հօրը վզին: Հայրը սեղմեց զայն իր բաքախուն կուրծքին եւ սիրազեղ համբոյրներով ծածկեց անոր գլուխն ու այտերը:

Որքան վար կ'իջնէին, այնքան աւելի խաւարը կը թանձրանար: Բայց հայրը ճամբան գիտէր: Եւ հօրը վզին փաթթուած գաւազը երբեք վախ չունէր: Ընդհակառակը հօրը գրկին մէջ միշտ ապահով էր եւ շատ երջանիկ:


Սիրելի մանուկներ եւ պատանիներ, այս աշխարհն ալ մեր երկնաւոր Հօրը ձեռքով շինուած մե՛ծ, խորունկ եւ մո՛լթ մասնանի մը կը յմանի: Իրաւ, անիկա լեցուն է պատուական գանձերով եւ հարստութեամբ, բայց անոր ճամբան խաւարչուտ եւ արկածալից է: Իյնալու եւ կորսուելու վտանգներով լեցուն: Սատանան հոն է, որ մըռնչող առիւծի պէս մեր բոլորտիքը կը պըտրտի եւ կը փնտռէ թէ ո՞վ կ'լլէ: Փորձութիւնները հոն են, որ կ'ուզեն մեզ մեղքի ծուղակը ձգել: Գէշ ընկերները հոն են, որ կրնան մեր բարի վարքը ապականել ու մեզ Տէր Յիսուսի ճամբայէն մոլորեցնել: Չար զրացիները հոն են, որոնք կրնան մեզ նախատել ու չարչարել: Վերջապէս մեր առջեւ կան թշուառութիւններ, հիւանդութիւններ ու մահը, որ կրնան յանկարծ մեր վրայ յարձակիլ: Ո՞վ գիտէ, ի՞նչ կրնայ պատահիլ վաղը: Մեր ճամբան մասնանի աստիճաններուն պէս մուծ է: Արդ, ի՞նչ կրնանք ընել

այս բոլոր բաներէն չվախնալու համար: Ի՞նչ պէտք է ընել այս նոր տարին խաղաղութեամբ սկսելու եւ ուրախութեամբ շարունակելու համար: Վիօլէթ մէկ բան ըրաւ: Առաջին աստիճանամասնէրուն վրայ իսկ աղաղակեց «հայրիկ, հայրիկ» եւ հաւատքով նետուեցաւ անոր գրկին մէջ: Դուք ալ մէկ բան կրնաք ընել ու պէտք է ընէք սիրելի պղտիկներ: Ձեր կեանքին այս տարուայ առաջին աստիճանամասնէրուն վրայէն իսկ աղաղակելու էք, «Յիսուս-Փրկի՛չ, Յիսուս-Փրկի՛չ» ու հաւատքով նետուելու էք Անոր օրհնեալ եւ բաց բազուկներուն մէջ: Մի վախ՛նաք, թէեւ դուք Յիսուս Փրկիչը չէք տեսներ մարմնաւոր աչքերով, բայց Անիկա ձեզ կը տեսնէ Վիօլէթի հայրիկին պէս: Անիկա միշտ ձեր մօտն է, ձեզ կը գրկէ, ձեզ կը փրկէ, ձեզ կ'օրհնէ: Անիկա է որ աշխարհ եկաւ մեղաւորները փնտրելու եւ փրկելու: Անիկա է որ ամէն օր կ'աղազակէ, «Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան»:

Անոնք որոնք առաջին անգամ ըլլալով Տէր Յիսուսի բազուկներուն մէջ կը նետուին, պիտի լսեն Փրկչին քաղցր ձայնը որ իրենց կ'ըսէ, «Ան որ ինծի կուգայ բնաւ դուրս պիտի չհանեմ»: Եւ դարձեալ «Ես եմ աշխարհի լոյսը, ան որ իմ ետեւէս կուգայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ»: Ո՛հ, պիտի տեսնէք այն աստեն, թէ Յիսուսի բազուկներուն մէջ որքա՛ն ապահով ու երջանիկ պիտի ըլլաք: Որքա՛ն խաղաղութիւն եւ ուրախութիւն պիտի ունենաք, ինչպէս Վիօլէթ իր հօրը գրկին մէջ:

Անոնք ալ որ արդէն ապաշխարած ու փրկուած են, որոնք Աստուծոյ որդի ու Յիսուսի աշակերտ են ու նորէն այս նոր տարին Յիսուսով սկսելու համար Անոր գրկը կը նետուին, պիտի լսեն այս անուշ խօսքը «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ միջեւ աշխարհիս վերջը»:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒԻՐԵՐ



ՀԵՂԻԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԲԱՅ ԴՌՆԵՐ.— Միսիոնարական պատմութեանց նոյնիսկ ամբողջ եկեղեցական պատմութեան, մէջ ոչ մէկ շարժում կարելի չէ բաղդատել այն ընդարձակ շարժման հետ որ տեղի կ'ունենայ Հնդկաստանի Պարթաներուն (հնդիկներու ամենէն ստորին սեպուած դասակարգը) մէջ: Միլիոնաւոր հոգիներ մահուան քունէն կ'արթննան եւ պատրաստ են Բը-

բիստոսի դառնալու: Այս վերջին տարիներու ընթացքին, ամէն ամիս 7 հազարէն աւելի անձեր ընդունուած են Հնդկաստանի քրիստոնէական զանազան հաւաքոյթներու մէջ: Հազարաւորներ ալ պատրաստ են նոյն ճամբուն հետեւելու:

Գահիրէի Ալ Ազհար համալսարանը որոշած է մուսամեսական միսիոնարներ ղրկել, որպէսզի ջանան այս Պարիսները իսլամ կրօնքին դարձնել: Եթէ մեր Աւետարանական Ընկերութիւնները մեծ թիւով նոր օգնական միսիոնարներ չընդունին, իրենց համար անկարելի պիտի ըլլայ Հնդկաստանի այս մեծ պէտքերուն հասնիլ:


Հունձքին Տէրոջը աղաչենք որ մշակներ ղրկէ այս դաշտերը որ կը ճերմկնան: Աղօթենք որ Քրիստոսի խաչին յաղթանակը ակներեւ ըլլայ այս երկիրներուն մէջ, ուր Սատանան իշխած է մինչեւ հիմա:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ.— Խմբագրութիւնս մտադրած է յաջորդ թիւէն սկսեալ իր ընթերցողներուն ներկայացնել մասնաւոր նիւթ մը, որ անպայման իր մեծ շահեկանութիւնը պիտի ունենայ: Այս նիւթն է «Մեծ դէմքեր եւ դէպքեր Հայուն հաւատաքի պատմութենէն»: «Շխտա՛կ է, կ'ըսես. մեր հայ Սուրբերու մասին որքա՛ն քիչ գիտենք: Իրաւ, կարգ մը անուններ կը յիշենք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Խորենացի, Լամբրոնացի, Նարեկացի, Շնորհալի եւայլն, բայց մեր գիտցածին ամբողջութիւնը ազգ է միայն: Ո՛վ են անոնք, ի՞նչ պարգաներու տակ եւ ո՛ւր ապրած են, ի՞նչ խորհած եւ փառաւորած, ի՞նչ արգիւնքներ ունեցած են եւայլն, այս մասին բոլորովին անգիտակ կը մնանք: Իրականութիւն չէ՞ որ «Բանբեր»ի ընթերցողներէն շատեր ձօրձ ՄԻԼԸՐԻ, Սփըրճընի, Սատուի մասին աւելի բան գիտեն, քան մեր սրբազան թարգմանիչներու մասին, որոնք Ս. Գրիգոր մեզի տուին մեր մայրենի լեզուով եւ որ իր կարգին անհնէն մեծ ուստարը եղաւ Հայ աղագային եւ եկեղեցական գոյութեան: Այս միակողմանի կերպին պիտի ջանանք դարման մը տալ: «Բանբեր»ի խմբագրական կազմի անդամներն մին, մեր սիրելի Բրոֆ. Խայկեան՝ որ արդէն իր մանկութենէն ի վեր Հայ պատմութիւնը նա-

ԵՐԳ ՊԱՏԱՆԵԱՅ ՀԱՄԱՐ ԵՒ ՄԵԾԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏ ՄԻԱՅՆ

Թարգ. Դերմ. Յ. Ն. Ղ.



Յիսուսի հետ միայն քալեմ պիտի
Եւ մտնեմ ելլեմ ես Անոր հետ,
Ոչ ոք կրնայ ըլլալ առաջնորդս,
Ան միայն ղեկավարս եւ միջնորդս:
Լեռ եւ ձոր, դաշտ ու անտառ եւ ծով
Ես անցնիմ կրուած Իր սուրբ ձեռքով:
Եթէ Տէրն չըլլայ ինձ ղեկավար
Չեմ կարող հասնիլ վեհ բնագաւառ:
Ան է ինձ ապաստան ապահով,
Բերդս հզօր երբ արձակուի ցուրտ հով,
Խորհրդովն Իր վճիռս տամ ամէն,
Իր խօսքն է ինձ «այո, եւ ամէն»:
Անոր մէջ ես մընամ հաստատուն
Ինքն է ինձ կեանք եւ ուրախութիւն
Ինձ համար Իր շնորհքն է միջավայր,
Հոն հանգիստս եւ, բայց ոչ ուրիշ վայր:
Հոն մաքրեմ սիրտըս եւ կարեկեր,
Ու աչքերս յառած են զէպի վեր:
Մինչ ամպերն բացուած տեսնեմ եւ Տէր
Կանչէ զիս Իր փառքին գերեզմար:

.....
խառնած եւ լաւ ուսումնասիրած է, ստանձնեց այս պէտքը Լիցնէ: Այս նիւթը բոլորովին նոր ուղղութիւնով մը պիտի ուսումնասիրուի, քան որ ասկէ առաջ թերթերու եւ կամ գրքերու միջոցաւ ուսումնասիրուած է: Գիտենք մեր սիրելի եղբօր ստանձնած գործին մեծութիւնը, բայց կը վստահենք իրեն եւ այն իմաստութեանը, որու գիմեւով նա ճշմարիտ Լոյսի մէջ պիտի դնէ մեր Հայ Սուրբերը որոնց կեանքը մեզի անկասկած օգտակար պիտի ըլլայ:

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖԻՐՄԱՆՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողով ներու մասին հարցնել տեղյն վրայ):

ՄԱՐՍԷՅԼ—Հովիտ՝ ֆվեր.) Յ. Ն. Ղազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 10 քարոզածողով, 2 r. Philippe de
» 11.30ին աղօթածողով, Girard
Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին նոյն տեղը
Սէն Ժուլիէն, Լէզ Օլիվ, Ս. Ժէրոմ Ս. Ան-
ժուան եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Ս. Միքը. Այս մասնաւոր բնակարաններու մէջ
Շարաժամիչի աղօթածողովները

Դ. շր. ժամը 14ին Սէն Ժուլիէն

Դ. շր. 20ին քաղաքը 2 r. Philippe de Girard

Ե. շր. ժամը 2ին Ս. Միքը

Ե. շր. ժամը 19ին Սէն Ժէրոմ

Ռ. շր. ժամը 2ին Սէնժոն Անժուան

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սափակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon St. Lour

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա

15 30 ին քարոզածողով:

ՍԷՆՔ ՄԱՐԿԻՐԻԹ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

ՍԷՆ ԼՈՒԻ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան
11 Impasse des Muriers St. Luis

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

ժ. 10ին աղօթածողով, ժ. 14.30ին քարոզ

Դ. շր. ժամը 20ին Անտ. ժողով

Ռ. շր. ժամը 20ին սերահոգութիւն

ԼԱ ՍԻՕԹԱ.— Կիր. ժամը 9.30ին աղօթածողով
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ.—Հովիտ՝ վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիտ Բրոշի. Գ. Գ. Խաչիկեան
2 r. du Colombier Valence (Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.—Հովիտ՝ վեր. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebate

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebate.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԵՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷՐԻԷՆ.—Քարոզիչ Պատ. Ի. Արրահամեան
60 Rue Richelandière

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ.—Հովիտ՝ Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bart Ա. քարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Բ. Բ. քա-

նակաւորութիւն: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Բ. Բ.

37 Rue Tournefort Paris 5 Metro Mouhe

Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ՝ Պատ. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

1937ի Հայ Ընտանիքի Օրացույցը սպառեամ.

Գոհութիւն կը մատուցանենք Տէրոջը այս յաղթութեան համար: Մեր օրացույցի սպառումը այս տարի գրեթէ աննախընթաց եղաւ: Այսօր, Դեկտեմբեր 15ին եթէ ունենալինք 350 հատ ալ, կրնայինք գտնուիլ տեղաւորել: Այս մեծ պահանջը մեզ գոհունակութեան մէջ կը թողու:

Անոնք որ կանուխէն ապսպրեցին իրենց օրացույցները ժամանակին ընդունեցին, ուրիշներ կը ցաւինք որ պարապը մնացին: Անոնց ապսպրանքը չենք կրնար նկատի առնել, որովհետեւ մեր քովը օրացույց մնացած չէ:

Ուրեմն երկու խնդրանք ունինք ապագային համար:

ա. 1937 տարուան համար ալիւս ապսպրանք չընել, քանզի անպատահ է:

բ. 1938 տարուան ապսպրանքները եթէ Տէրը կամի ու ապրինք, արդէն Օգոստոս ամսուան րօնելու ենք, որպէսզի խմբագրութիւնը հետզհետէ ատենին զրկէ գտնուի: «Բանբեր»ի մէջ արդէն երբ ատենը գայ, պիտի ծանուցանենք: Մեր ազօթին է որ այս օրացույցը իր գացած բոլոր տեղերուն մէջ օրհնութիւն սփռէ: Մեր ջանքն է ճշտել Աստուծոյ խօսքը, ուր որ անկ է: Շնորհակալ ենք մեզի հետ գործակից եղող բոլոր սիրելիներուն, որոնք ջանք չխնայեցին օրացույց մը տեղաւորելու ընտանեկան յարկի մը մէջ: Ազօթենք որ Աստուծոյ խօսքը արդիւնքներ բերէ այս տարի ալ, քանզի այսպէս գրուած է. «Ինչպէս անձրիւր ու ձիւնը երկինքէն կ'իջնէ եւ հոն չը դառնար, հապա երկիրը կ'ոռագէ ու ցանոցին հունտ եւ ուտողին հաց կուտայ, Իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ, Ինծի պարապ պիտի չգառնայ, հապա իմ կամքս պիտի կատարէ, ու յաջողութեամբ ի գործ դնէ այն բանը, որու համար գանձեալ զրկեցի» Եսայ. ԾԵ. 10, 11:

Եղբայրական աջակցութիւն.

Ուրախութեամբ կը տեղեկագրենք որ անցեալ տարի, երբ մեր սիրելի ընթերցողներէն մին կամ միւր նիւթական անձուկ պարագաներու ենթարկուած ըլլալով չէր կրնար իր բաժնեկիւնը վճարել եւ դիմում կ'ընէր անոր համար, ու երբ մենք «Բանբեր»ի մէջ ղրկաւ տեղաւորական աջակցութեան ղրկեցինք, անարձագանք չմիացինք ընթերցողներու շրջանակին մէջ:

Գիտենք թէ ունինք սիրելիներ, անոնց թիւը քիչ չէ, որոնք իրենց վայելած օրհնութիւններուն միշտ բաժնեկից ընել կ'ուզեն նաեւ ուրիշ-

ները, այսպէս միշտ մէկ կամ քանի մը «Բանբեր» նուիրելով ուրիշներու:

Այս տարի խորհեցանք հետեւեալ կերպով շարունակել այս բարի գործը, գիտնալով որ երկու կողմին համար շիտակն է այս: Պատահութիւն ալ կ'ըլլայ մեզի նուէր ընողներու «Բանբեր»ը ընդունող անձին համար ազօթել, եւ ազօթել նաեւ փոխադարձաբար, այսինքն նուէր ընողներու անծանօթ մնալով հանգերձ ազօթէ նուիրատուն համար:

Որպէսզի անծանօթ մնան անձեր եւ մեր նշուէրը իսկապէս ըլլայ Մատթ. 2. 5ի Տէրոջը հրաշմանին համաձայն, այս առթիւ կը գնենք ցանկ մը զոր իւրաքանչիւր նուիրատու իր առջեւ ունենալով, ինքը որոշէ թիւը որու երթալու է «Բանբեր»ը: Պիտի խնդրեմ միայն որպէսզի կարելի եղածին չափ շուտով շարժինք որ թերթերը շատ շուշանան, մեր նուիրեցեալներուն համակցով:

«Բանբեր»ի պէտք ունին.

1. Հոգեւոր գործաւոր մը
2. „ „ „ „
3. „ „ „ „
4. „ „ „ „
5. „ „ „ „
6. „ „ „ „
7. „ „ „ „
8. „ „ „ „
9. „ „ „ „
10. „ „ „ „
11. Ծննդունի քոյր մը
12. „ „ „ „
13. „ „ „ „
14. „ „ „ „
15. „ „ „ „
16. „ „ „ „
17. Ծննդունի եղբայր մը
18. „ „ „ „
19. Ընտանիքի տէր քոյր մը
20. „ „ „ „ հայր մը
21. Հիւանդանոց մը
22. „ „ „ „
23. Թոքախտաւոր եղբայր մը
24. „ „ „ „ քոյր „
25. Երիտասարդաց Ընկերութիւն մը
26. Երիտասարդուհեաց „ „
27. Յրանտ, բանակի մէջ հայ զինուոր մը
28. „ „ „ „ կամաւոր „
29. Առանձնակեաց ծերունի քոյր մը
30. Գործազուրկ քոյր մը